

6288

5

✓

9(56)

5-67

0

W. B

ՄԻԹԵՐ ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

12206

№ 1.

2(56)

15-67

ՄԻ ԹԻՒՐԻ ՍՊԱՅԻ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

107

Հրատարակող քիւն
«ԱԶԱՏԱՄԱՐՑ»-ի

4
8
7

Թիֆլիս
«ԱՆԵԱՏԱԻՐ»
1917

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

№ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



2004

92609-42

599-2002

9(56)

ՄԻ ԹԻՒՐԲ ՄՊԱՅԻ ՅՈՒՇԱՆԵՏՐԸ

Յառաջաբանի փոխադր. 6

Թարգմանելով և հրատարակելով Օսմանեան բանակի սպաներից 44-րդ դնդի 4-րդ վաշտի յիսնապետ սէրէզցի (Սեւանիկի վիրայէթում) Հագգի էֆէնդիի ձեռագիր յուշատետրը, մերնպատակն է ոչ միայն սպայի բերանից լսել այն զազանութիւնները, որոնք գործադրել են հայ ժողովրդի վրայ և գրեթէ միշտ էլ պաշտօնական անձնաւորութիւնների ձեռքով, այլ մեր նպատակն է նաև սրանով երևան բերած լինել Օսմանեան բանակի ռազմական արժէքը: Ուզում ենք, որ ամենքը իմանան, թէ ինչ համատարած սով ու թշաւութիւն է տիրել այն մերկ ու սոված ամբոխի մէջ, որը Օսմանեան բանակ անունն է կրել, և որի առջևից հահնջեց սուսական կուշտ ու հազւած զինուոր:

Յուշատետրը ապացուցում է նաև մի ուրիշ հանդամանք:

Վերջերս զանազան ուղղութեամբ ստացւած լուրերը յամառորէն պնդում են, որ Թիւրքիայում համատարած սով է և հիւանդութիւն: Այս յուշատետրը վերաբերելով հանդերձ 915-ի մայիսից մինչև յուլիսի շրջանին, այսինքն Դիլիմանի նահանջից մինչև յուլիսի նահանջը, մեզ բերում է հետեւեալ եզրակացութեան: Եթէ պատերազմի 7-10-րդ ամիսներին, երբ Թիւրքիայի բերքը լիովին գտնւել է Թիւրքիայում և մանաւանդ բանակի տրամադրութեան տակ,

12206

և համաձայն յուշատետրի վկայութեան, այդ վիճակումն իսկ զինւորները օրերով խոտ են կերել, ինչ պէտք է լինի այժմ, երբ հացը արտահանել է, երբ շկայ այլևս հայ հողագործ գիւղացին (որը պետական արեւելեան ամբարները լեցնող միակ աարըն էր), երբ ողջ մահմեդական տղամարդիկ մինչև 50 տարեկանները զէնքի տակ են և հեակարար կտրեած հողից ու աշխատանքից:

Պարզ է ուրեմն, որ սովը փաստ է. իսկ սովը ամեն տեղ և մասնաւորապէս Քիւրքիայում (ուր մեծ չափով նշանակութեամբ բացակայում են բժշկական օգնութիւնն ու դեղօրայքը) նշանակում է արդէն հիւանդութիւնների նախօրեակը:

Մի ուրիշ պարագայ էր.

82 էջից բաղկացած այդ յուշատետրում ընթերցողը յաճախ առիթ պիտի ունենայ կարգալու Օսմ. Հեռագր. Գործակալութեան սուտ ու սխալ շուրերը. իսկ ինչ որ մեծ խանդավառութեամբ է ընդունում յուշագրողի կողմից, դա հաշտութեան լուրն է, որի համար միշտ աղօթում է, որ իրականութիւն դառնայ, մի բան՝ որ ապացուցում է, թէ դեռ պատերազմի 10-րդ ամսին սպայութիւնը ձանձրացրել ու յոգնել էր կուից և կարօտցել էր հաշտութեան: Իսկ եթէ համեմատարար կուշտ ու երջանիկ սպան է այդպէս կարծուի հանդատի, կարելի է երևակայել թշուա զինւորների կարօտը:

Անա այս բաղմաթիւ նկատումներով հրատարակում ենք այս յուշատետրը, որը վերջանում է սպայի գերի ընկնելու յաջորդ օրը և զժբախտարար քիչ բան է պարունակում այն տպաւորութիւնների մասին, որը կրել է Օսմանեան սպան սուսական բանակից և կուլտուրայից:

Ստամբուլի Գրքարանի Գրքարանի Գր. Փ.

1915

1331

0584

... էլ գէ ...

1331 թւի (1915) մայիսի 1-ին մայր հայրենիքումն են. վաղը Բաջիրկեայից *) պիտի մեկնենք: Օրհնեւած հողի հօտն իսկ տարբեր է. մեր ձախ կողմից հօտող ջրի հոտանքի ուղղութեամբ դնում ենք: Ենթադր բոլորովին լեանտ է. ամենուրեք ձիւնով ծածկւած է, իսկ ջուրը սատոյցի պէս պաղ է. Հեռագրեռէ բարձրանում ենք. քալում ենք ձիւնի վրայից. երեկոյեան իջկանը մի սարահարթ է, որ գտնուում է Տիսիկի կողքող գիւղի շրջակայքում: Եթէ երկու-երեք ամիս առաջ գալու լինէինք, այս տեղերից անցնելը անհնար էր: Լեռները մինչև այժմ՝ ձիւնով ծածկւած են. լեռների ստորոտներումն անգամ դեռ ձիւն կայ. անկարելի է չհիսնալ բնութեան գեղեցկութեան վրայ: Ինչ նոր են սկսել արտերը հերկել, նոր են աղատել ձմեռուայ ձեռքից:

Սեղծ քիւրդերի վիճակը շատ վատ է. թշուաներին էլ գրկեցինք իրանց տներից. անվերջ գողթում են իրանց ոչխարներովն ու կայքերովը. այս տանջանքին Ֆիդիբապէս անկարելի է առկալ. Բաջիրկեա գալիս անցնելու էինք մի ջրից, որը բաւական խորունկ էր. խեղճ կանայք սրունքները մերկացնելով անցան ջրից. մարդկային սիրտը կարծող է դիմանալ այս վերքերին: Այնու ամենայնիւ, եթէ նրանց տեղաւորեն մեր երկրի հայերի բնակարաններում, այդ

*) Բաջիրկեա գիւղախումբը (ԿԿՐՏՈՒԿԵ) պատկանում է Վանի վիլայէթի Գեաւառ գաւառակին և գտնուում է պարսկական սահմանի վրայ: Ծ. Թ.

գէպըում նրանք ոչ միայն մի պատար են լինելու Ռուսիայի դէմ, այլ նաև պիտի ազատւած լինեն Վերջապա պարսիկներին անտանելի տանջանքներից և ուսանելի լծից:

Այսօր հանգստանում ենք Տիլսիդիում: Երևում է որ Վանում այնքան վտանգ չկայ, դրա համար էլ մեզ հանգրտ են թողնում *):

Բեաւառում հանգստանում ենք. ճամբաները շատ վայտ են, իսկ ջուրը կարծես հետևում է մեզ: Գեաւառը գտնուում է մի բլրի վրայ. ունի մի գեղեցիկ գորանոց: Գեաւառում գտնուած գիշերը յանկարծ գէնջի ձայներ լսեցին. իմացանք, որ շաղաքում դեռ հայեր կան եղեր: Տեղի կառավարութիւնը, տեսնելով զինւորները լալը, սկսեց իր ուժն ու գոյութիւնը ցոյց տալ: Հարիւրից աւելի հայեր կան եղեր քաղաքում. երեկ երեկոյան նրանցից 70-ին մաքրել են. առաւօտեան գործը դեռ շարունակուում է: Հարիւրից աւելի երոջ այդ հայերին բոլորովին տրորել են:

Զինւորներիցս մէկը, որ քաղաք էր գնացել, վերադարձին պատմում էր, թէ հայերի դիակները ընկել էին խաւն ի խուռն, որը երեսն ի վեր էր ընկել, որն էլ ամբողջ մարմնով երկնցած՝ հոգեկորքն էր ապրում:

Զինադարձ Սաղրիկ էրկեղին քաղաքում տեսել էր, որ ժանդարմներից մէկը հինգ հայերի գցած իր առջև, տարել էր մինչև քաղաքից դուրս: Նրանցից մէկը, որը տանկեօթ տարու մի պատանի էր, անգիշտ կերպով լալիս է եղել, իսկ միւրները աւելի կարթ գեաւորներ (կոշտ անհաւատներ)

*) Ակնարկւած թւին թիւրքերը արդէն փախել էին Վանից և Վանը գտնուում էր Վանի հայերի տրամադրութեան տակ. կամաւորները հասնում էին մայիսի 6-ին:

են եղել: Ծանկարծ թիկունքից մի-մի կրակ է բաց անում մեծ շափիլ (95 շափանոց) մատուցէր հրացանից և ամբողջին էլ գետին փռում, բարբի թիկունքից էլ պատուհաններ է բաց անում: Փճանալիքների առէք ձեզ անկախութիւն: Ռուսիայում իրախճանքներ են կատարում նրա տաճ Բէյութիան առիթով. միանգամայն մեր պարտութիւնն էլ են լսել և այլևս չեն սեղմուում իրանց պատեաներում: Նրանք այնտեղ ուզում է ուրախանան, ուզում է տօն կատարեն, այստեղ եղողները սուգի մէջ են: Մրիկաներ, թագաւորութիւն պիտի դառնաք. Ինչպպան (Աստուծով) ձեր արմատներն անգամ պիտի քանդենք: Իու եկ այս տարօրինակութիւնը տես, որ մանձնդականները դեռ ևս պահպանում են հայերին: Մի ժանդարմ ինձ ասաց, որ փոքր երեխաներն մանձնդական դարձնելով պահում են, երիտասարդ ազնիւներին վերցնում են իրանց համար, իսկ տղամարդկանց ու ձերեղին կոտորում են:

Այսօր անցանք մի գեղեցիկ դաշտից. մեր ձախ կողմում գտնուող ջուրը շարունակուում է հոսել միկնոյն ուղղութեամբ. թուում է, թէ մեծ Զայ դետը պիտի լինի: Երեկոյան հանգստանում ենք Եակրտանում: Մեր առջև կայ մի նեղ կիրճ, որ շատ նպաստուար է ինքնապաշտպանութեան համար: Այսօր ճանապարհի երկայնութեամբ ձգուում է մի շուէ. դա Թանսին բէյի գործը պիտի լինի: Առաւօտեան շարժուում ենք. ջուրը էլի մեր ձախ կողմից հոսում է: Ետէն վերջացաւ. շափազանց նեղ մի ճանապարհից ենք անցնում, այնպէս որ երկ-երկու և երեքին էլ մէկ-մէկ հողով ենք քարում: Անցնում ենք մի ջրից և մազցում ենք մի բաձր լեռ. այնքան օտրոտ մի հող է, որ վրայից քարելը անկարելի է: Վերջապէս բարձրանում ենք և հասնում մի օգտուն սարանարթի, որը բաւական ընդարձակ է:

խեղճ հողագործի ժողովուրդը այս տեղերը հերկում է: Երեկոյան հանգստանում ենք Թեքեարովս անուն տեղում:

Ան լուր. երէկ մայիսի 4-ին Վանն ընկել է: Ձէվտէթ բէյը իր ձեռքի տակ գտնւած 6000 զինւորներով քաշել է Խոջաբի կողմերը: Ռուսները երկու գունդ զինւորով գրաւել են Վանը. կան նաև 10,000 հայեր: Մօտ է վճռական ելքը: Ռուսներն ուզում են խլել վեց վիլայէթները, դրա համար շարժուած են դէպի հարաւ. նրանք ըստ երևոյթին հայերին ինքնապարուծիւն են խոստացել: Մեր բանակի աջ թևը վտանգուած է. վտանգի ենթակայ է նաև մեր շրջիկ գունդը ամբողջովին. ոչ կապակցութիւն կայ և ոչ մի հող, ուր կարողանանք ուտեստը ապահովել: Հեղճեաէ բոլորովին անտէր ենք մնում. ոչ օգնութեան եկող կայ, ոչ էլ ձեռնարկող:

Ասում են, որ մենք մինչև Բիթլիս պիտի գնանք՝ խոնդարելու համար ուսանների առաջխաղացումը դէպի հարաւ: Դեռ մի կապ հաստատենք Ձէվտէթ բէյի հետ, տեսնենք նրանցից յետոյ բողբը ինչ պիտի տայ: Բաջիրկեայի կիրճից բացի, աջ կողմում կայ նաև Հաշարի անցքը, իսկ դէպի վերև՝ Կոտուրի կիրճը: Այս տեղերից ուսանիք չէին կարող անցնել: Թուած է, թէ Բայազիդից են առաջացել, որովհետև Բայազիդը նրանց զինւորական գրաւման տակն էր: Արդէն մէկ երկու օր առաջ խօսում էին, որ Վանի հիւսիսակողմը գտնուող Բերկրի կալան ընկել է. նշանակում է, որ այնտեղից են իջել: Յետոյ՝ մեր թողած լեռները պաշտպանում էին Իդրիս էֆէնդու վաշտը և նրան կից գործող ժանդարմների գունդը. բայց վերջ ի վերջոյ էլի ետ են քաշել: Կեցցեն մարզիկ, որ յաջողել են առանց կորուստի քաշել և անֆլաս հասնել Բաջիրկեա: Ռուս ձիաւորները

այժմ սպանում են Բաջիրկեային, իսկ Իդրիս էֆէնդու վաշտը դեռ դիմադրում է:

Այս, մեր յարձակողականի անաշտուլիւնից յետոյ, երբ այլևս յոյս չմնաց երկրորդ յարձակողական կազմակերպելու, եթէ մենք քաշէինք Վան, այս դժբաղդութիւնը չպիտի պատահէր: Ես իմ խեղճ խելքովս միշտ ասում էի, որ պէտք է քաշւենք դէպի ձախ և այդ կողմից սպանանք: Ասել է որ այժմ Կուշլի անցքն էլ, Տաք-Ղրի անցքն էլ պարապ մնացին: Ռուսները պիտի հասնեն մինչև Ուրմիա, Երնո և Ռայեաթ: Ասուած, դու ազատէ մեզ: Յետոյ էլ Ռէվանդուզի ճանապարհով Բաղդադից առաջացող անգլիացիներին պիտի միանան: Ասուած իմ, դու յաջողութիւն մի տար իսլամի թշնամիներին: Ափսոս «մահմեդականների միութեան» յոյսերին, որոնք բոլորն էլ օգը ցնդեցին:

Քեաաիմ բէյի բանակի ձիաւորները, ինչպէս նաև մեր հեծեալ վաշտը, առաջացել են՝ գրաւելու Բաշկալէն: Հետևակ զինւորի համար ութ ժամայ ճամբայ է մինչև Բաշկալէ: Դոնէ Բաշկալէն պահենք, այլապէս մեր վիճակը շատ վատ պիտի լինի: Կոտուրի կիրճում գտնուող մէկ վաշտ զինւորները ետ են քաշուած դէպի Բաշկալէ. ինչ անեն. մեր գտնուած լեռնադաշտի բարձրութիւնը 2800 մետր է:

Գեաւառում սպանւած հայերի թիւը 200 է եղել: Խալի բէյը ներողամտութեամբ է վերաբերել և «ինչ ուզում էք արէք» ասելով բաց է թողել:

Իրլիմանի կուում մենք ունեցել ենք հետեւեալ կորուստները. 56 սպայ, որոնցից 20-ը սպանւած են և 36-ը՝ վիրաւորուած, 600 զինւոր սպանւած և 1800 հոգի վիրաւորուած. նշանակում է, որ կորցրել ենք ամբողջ մի գունդ:

Այսօր հանգստանում ենք. սա մի խորհրդաւոր հանգիստ է. արի տես, որ սև լուրերը շարունակուած են: Ռուս-

ները Բաշկալէն էլ են գրաւել. Ձեվտէթ բէյը քաշուած է դէպի հարաւարեւմուտք, դէպի Բիթլիզ. մենք էլ պիտի քաշուենք դէպի Ջիւլիսմարիկ: Խալի բէյը նախապէս ուղեցել է քաշել, բայց պատերազմական խորհուրդը յայտնել է, թէ բանակը սոված պիտի մնայ (որպէս թէ խելք են հասցրել): Մենք էլ դէպի հարաւարեւմուտք պիտի քաշուենք: Ասուած, զու ապահովութիւն տուր. «Գնացի՛նք Տամբատ՝ բրինձ բերելու, տանը գտնուած ձուարն էլ կորցրինք»: «Իու մի թափառաշըջիկ գնչու ես, ինչիդ է պէտք արծաթէ զուռնա*») Անցեալ կուին ողբացինք Չավիդ փաշայի բանակի վիճակը. հիմա մենք ոչ մի տարբերութիւն չունենք Չավիդ փաշայի հետեալ դնդից. մեզի հապա սիլ ողբայ. մեր վիճակն ու գրութիւնը բանակից աւելի վտանգաւոր է: Թիկունքում կուին է տեղի ունենում. մեր դոսիք ճանապարհը կտրեց. Թիկունքի լեռներում ասորի-կաթուղի ջրղոր կան, այսինքն քրդի հայեր (?): Դէպի Թիկունք ատաշանախն էլ վտանգաւոր է: Ասուած ին՝, քեզ ապահուցի՛նք. զու փրկութիւն տուր:

Առաւօտուն շարժում ենք. քալում ենք բարձր սարահարթից ու իջնում ձորը. մեր առջևի ամուր բլուրներում կայ մեր գնդերից մէկը: Չալքըրանի բլուրի վրայ հանգրստանում ենք:

Ահա, տես, Բաշկալէից պաղթող թիւրք պաղթականների թշառ վիճակը. անվերջ քաշում են իրանց հօտերով ու կայքերով: Այնքան շատ ոչխարի հօտեր ու սևառուարի

*) Այս խօսքերը ինքնայանդիմանութիւններ են, որոնց առիթ է աւել Ռիլիմանի ճակատամարտը. Սարիզամիշի կուին նմանող այդ արկածախնդրութեան արդիւնքը այն եղաւ, որ ջախջախուած թիւրքական բանակը նրանից լեռայ իր սեփական սահմաններն իսկ չկարողացաւ պաշտպանել:

սախիրներ կան, որ անկարելի է հաշել: Արօտատեղերը ցեղեցին հօտերով. անօթութիւնից չպիտի նեղուենք: Թշնաֆին Բաշկալէն պարպել է ու քաշել դէպի Բարգուղիմէնս վանքի կիրճը. Ձեվտէթ բէյը Վանից քաշուլիս ամբացել է Վանի և Բաշկալէի միջև գտնուող մի կիրճում, ըստ երևոյթին դէպի Բաշկալէ է քաշուում. Ինչպէս Բաշկալէում պիտի միանանք. Ինչպէս Իդրիս էֆէնդին էլ Բաշկալէիցում մի լաւ դաս տւած կը լինի ուսաներին: Մի լուրի նայելով, նա իճացրել է ուսաների մի հեծեալ վաշտ. մի ուրիշ լուրի համաձայն՝ ուսաները մէկ գունդ հեծեալ և մէկ գունդ հետեակ զինւորներով յարձակել են, բայց նա ոչ մի կարևորութիւն չի տւել, այլ երբ մտել են հրացանի հասողութեան սահմանի մէջ, յանկարծ մի կրակ է բաց արել և ուսաները հազիւ թէ թնգանօթների պաշտպանութեան տակ կարողացել են իրենց դիակները փախցնել: Մենք կորցրել ենք մի գնդացի:

Այսօր հանգստանում ենք. մեր երրորդ վաշտը գնաց դէպի Բաշկալէ՝ Ձեվտէթ բէյի ձախ թեր ապահովելու համար. եօթերորդ գնդից մի գումարտակ կամաւոր կերպով գնաց հետախուզութեան Ռիլիմանի պարապ մնալուց օջտւելով, քրդերը գրաւել և Ռիլիմանը: Երեկ առաւօտ՝ եօթերորդ գնդից մի գումարտակ, հարիւրապետ Սաֆվէթ էֆէնդի զու հրամանատարութեամբ, կամաւոր կերպով գնաց դէպի Բաշկալէ: Թող Ասուած սնուակաս անի այսպիսի անձնականներին:

Երեկոյեան կողմ ուրախալի լուր է ստացուում.՝ հերոս գումարտակը գրաւել է Բաշկալէն և աւելի առաջ է անցել. երրորդ վաշտն էլ նրա յետևից հասել է՝ քաղաքը ամբացելու համար: Երեկոյ է. զինւորները միւզիկ են արձում և ուրախանում: Առաւօտեան՝ զաղթականները այս լուրը

յսելով, մեծ քաղմութեամբ վերադառնում են իրանց տները երեկ մինչև իրիկուն զինւորները ոչխար ու գառ էին կերել, գաղթականները 15 զուբուշով ծախում էին վեց օխանո մի գառ, 60 զուբուշով մի ծնած այծ՝ իր ուլով մէկտեղ, 25 զուբուշով ոչխար կամ հորթ: Կաթն ու մածուցը չափազանց առատ է:

Մի օր էլ հանգստանում ենք: Ահա Ձէվտէթ բէյը եկաւ թուում է, թէ տեսնեցին մեր հրամանատարի հետ: Կէսօրի շարժում ենք. խորոված գառ պիտի ուտէինք, բայց անկատար մնաց: Մնցնում ենք Չապ գետից. մի ուրիշ ջուր է մեր ձախ կողմից է գալիս: Մեր վաշտի երկու զումարտակները գնացին. երեք քիթմէթը հեռու ենք իրարից: Եաթսու ատեն (իրիկան աղօթքի ատեն, մօտաւորապէս ժամ 8-ին) հասանք Էմէրապատ գիւղը, բայց աւելի առաջ պիտի անցնենք: Վերջապէս վաշտի հրամանատարը մեզ մի արտի մէթողեց. «Այստեղ պիտի մնաք, մինչև որ մի մեծ դժուարութիւն անցնի», ասաց ու ինքը գնաց: Մինչև տաւօտ սըրտատրոտի սպասեցինք՝ չեկաւ: Մեր զիմացը թշնամու բանակատեղում կրակ է վառուում. եթէ նրան մի յարձակման են թարկենք, ոչ մի սրաշտպանողական դիրք չունի:

Լուսաբացին տեսնում ենք, որ յիտուն հողինոց մի հա հրոտախումբը (չէթէ) այնքան է յառաջացել, որ կարծես թուզում է մեր քիթը մտնել. սրանք առաջանում են Էմէրապատի ուղղութեամբ: Ահա մեր առաջին խմբակի կողմից մկրակ բացեց. բայց ինչ օգուտ, որ մեր բոլոր զինւորներ, ողջ դիշերը քնել էին ու թմրել. ասկից զատ՝ նշանաձգութիւն էլ չպիտէին, զրա համար ոչինչ չկարողացան անել: Եթէ կանոնաւոր զինւորներ լինէին, երբէք նրանք չէր կարող ազատուել: Բայց մի բան էլ կայ. եթէ մենք կռւբոնւէինք, ոչ պիտի կարողանայինք նահանջել, ոչ էլ դիրք

ստրանտել. ոչ ռազմամթերք ունէինք, ոչ էլ կապ և յարենրութիւն. մի իօսքով պիտի զոհւէինք վաշտի հրամանատարի «մեծ դժուարութեան»:

Վերջապէս հրաման եկաւ և ետ քաշուեցինք. մենք նշանակեցինք գնդի պահեստների բաժնում. վտանգաւոր դրուին և ծայրայեղ յոռետեսութիւն է տիրում. ռուսների գունդ հետևակ զինւորներ յարձակում են գործում: Այդ մեր թնդանօթները լաւ գործ տեսան. նրանց բերել են մինչև մեր առջևի բլուրը. երեկոյեան՝ ռուսները նահանում էին:

Այսօր տեսնեցի Թարիք բէյի հետ, որ ուսանում էր Լօնում և այժմ կամաւոր է զարձել. նա չափազանց վաղուց, յանդուզն ու վեհանձն երիտասարդ է:

Երեկոյեան կողմ ռուսները այրում էին Բաշկալէն. սաւանների մահնառաջին բնորոշ գործն է՝ նահանջելիս այլ գիւղերն ու քաղաքները: Ուտեստից նեղուում ենք, իսկ ը բարոյական կորովը ելէքտրական բարդի պէս բուպէտա ազդուում է ամենափոքր յաղթութիւնից իսկ (ազնիւրք ունենք):

Թշնամին մեր դէմից քաշւած լինելով, այսօր կռիւ չուրք: Բաշկալէն դեռ այրում է. թուում է, թէ թշնամին դժ նահանջ է կատարում, որպէսզի մեզ դէպի իրեն քաշի. էկ նա մէկ գնդով յարձակում էր, իսկ այսօր նահանջում է: Երէկ նա շատ աշխատեց քանդել Չապ գետի վրայւած կամաւորը, բայց չյաջողեց:

Բաշկալէն մի դեղեցիկ գիւղաքաղաք է՝ լեռների ստորում: Ռուսները սովորութիւն ունեն բաց տեղերում բանաւոր որովհետև մարզիկ վախ չունեն. նրանց թնդանօթները լաւ նշան են խփում: Երեկոյեան պէտք է դիրքերը աւելնք:

Մի սրտապարար և բանաստեղծական ուրախութիւն գգում սիրտս: Ա՛խ Ստամբոլ, անցեալ յուշեր... Ներքե Ստաւած իմ՝ իմ պակասութիւններս. մարդս սիրուց չի կըլ տանում: Ստաւած իմ, դու գեղեցիկ վախճանով վերջացու այս կտիւր:

Մի վաշտի շրջանի պաշտպանութիւնը ստանձնեցի մի խմբակով. մինչև զինւորներին տեղաւորելը՝ կէս գիշեր եղաւ: Մեր գունդը շրջակայ բլուրներում ամբողջութիւններ է շինում. բուն գիծը այնտեղ է. այսպիսի կարգադրութիւնները ժամանակին չեն յայտնում և դրանով մեզ մտահոգութեան մէջ են թողնում:

Կասկածելի մի գիշեր անցկացրի. եթէ թշնամին յարձակում գործէր, անցեալ գիշերուայ պէս չպիտի կարողանայի քաշել: Երկու վաշտի պաշտպանութեան համար գոնէ երկու գումարտակ պէտք էր թողնէին. մէկ գումարտակը ինչ անի:

Անթուրթիւնը սկսեց այլևս իր ուժը ցոյց տալ. խեղճ զինւորները բոլորովին խոտ են ուտում. նրանց մօտ ունէ ուտելիք չմնաց, ինչպէս նաև ինձ մօտ՝ հաց: Չեվտէթ բէյը իր ուժերին տեղաւորել է Չուխի կիրճում, որը Վանի և Բաշկալէի միջև մի ամուր կիրճ է: Նա ասում է, որ թշնամու համար անկարելի է Վանից Բիթլիզ անցնել: Մի շուկայ Վանի լճի հիւսիսակողմը, որով հինգ օրում կարելի է հասնել Բիթլիզ:

Յառաջապահների խումբը յանձնեցի իմալլէ Էֆէնդիին: Տարօրինակ լուր. բանակի բոլոր բեռներն ու ծանրութիւնները փոխադրեցին մի գիւղ, որը գտնուում է մեր դիրքերից դէպի ձախ և երեք ժամով դէպի ետ. դեռ յայտնի չէ թէ մեր վաշտն էլ պիտի երթան, թէ ոչ. թւում է, թէ մեզ այստեղ պիտի գոհեն: Չես հասկանում մարդկանց միտքը

չես ճանաչում երկիրը. եթէ քաշելու լինես, թւր պիտի գնաս, իսկ եթէ հետապնդելու լինես, ինչպէս պիտի նահանջես: Այսօր Բաշկալէի քարտէզն էլ են ուղարկել. մարդս ուղղակի շարում է:

Ինչ որ է. տակաւին չեն քաշել. զինւորների համար միս ու ցորեն եկաւ. մինչև երեկոյ պիտի եփւի, որովհետև դարձեալ յարձակում կայ եղեր: Մի անորոշութիւն է, որ շարունակում է. բնաւ չգիտենք, թէ ինչ է կատարելու. մի կարգ տգէտ մարդկանց զոհը պիտի լինենք. թր ուժովդ, թր հետախուզութիւնովդ, թր զինւորական պատրաստութիւնովդ ես յարձակում:

Վերջապէս կացութիւնը պարզեց. ոչ թէ յարձակում, այլ նահանջ ենք անելու. մենք էլ վերջապահ ենք նշանակել: Էօմէրապատում երրորդ անգամ լինելով՝ վերջապահութեան վիճակը մեզ քնկաւ. այժմ էլ արի տես, որ երեկոյեան պահուն մեր գումարտակը կուի բռնեց թշնամու հետ. հէյ վախ... չպիտի կարողանանք քաշել: Ինչ որ է. թշնամին ինքը քաշեց: Լեզուպատառ էի լինում, երբ մտածում էի, թէ լուսնակի լուսով կարող էինք նկատել. բայց վերջապէս անցանք և ետ մնացող զինւորներին մի կերպ յտնողեցանք մտցնել Ծորդ գնդի սահմանի մէջ:

Անցնում ենք մի բարակ առւիյ. վերջապէս լուսանում է: Վանի նահանգի հողը շատ աղքատ է. ժողովուրդը միայն ոչխարաբուծութեամբ է զբաղում. ունէ արտ չկայ, ամենուրեք լեռ ու ժայռ և ուրիշ ոչինչ. հողը շատ քարքարոտ է:*) Թւում է, թէ դէպի Բիթլիզ պիտի քաշենք. հինգ ժամի

*) Մէկ երկու լեռնային գաւառներից դատելով, ամբողջ նահանգի մասին հանւած այս եզրակացութիւնը բոլորովին չի համապատասխանում իրականութեան: Ծ. Թ.

չափ հանգստանում ենք ի՞նչ և կէսօրին էլ չարժուում ենք. ճանապարհը աւելի և աւելի քարոտ է դառնում, երեկոյան հանգստանում ենք Բաջանսնուն գիւղի դէմ ու դէմը. մեր ձախ կողմից հոսում է կարասուն:

Կէսօրայ ատին մի ձիւղոր արագ կերպով եկաւ և յայտնեց, որ սուսները մեզ հետապնդում են. անմիջապէս գատրաստեցինք: Եօթերորդ զունդը ձամբայ ընկաւ:

Faint, mostly illegible handwritten text in Armenian script, appearing to be a continuation of a narrative or travel account.

Թնդանօթի ձայները սկսեցին լսել: Բաջանում մնացած գիշերը Խալիլ բէյը մի մարդուց օղի էր ուզել՝ խմելու համար, զլուխը տաքացնելուց յետոյ նա միւրիկ էր չափել տալիս. ատուօտեան էլ այդ տաքացած զլխով դնաց կուրի դաշտը: Հիմա էլ Ձէվտէթ բէյը մեզի քշում է դէպի Վան: Հրամանատարները մէկ շեն, հինգ շեն... վեր կացողը հրաման է արձակում. Էօմէր Հաջի և Քեսախմ բէյերը, պատերազմական խորհրդի նախագահը, Ձէվտէթ բէյը, հրոսախմբի պետերը (չէթաջիններ) ևայն, բոլորն էլ մի-մի հրամանատարներ են:

Իներբորդ զունդը եկաւ. ցերեկայ ժամի երեքին նա էլ յարձակման է ենթարկել, բայց յաջողութեամբ քաշուել է: Եօթերորդ զունդը վերջապահ է նշանակւել:

Մեր՝ Չալգբրանի բլրում բանակած ժամանակ նաբաւոր էր մեր զաղթականներին ետ ուղարկել, բայց Խալիլ բէյը այդ բանը չարաւ: Ո՛վ Խալիլ բէյ, դու զուցէ ազատես նիւթական պատասխանատուութիւնից, իսկ բարոյական պատասխանատուութիւնից ինչպէս պիտի ազտուես:

Բաջերկեայի շրջանում մերոնք վերջին ծայր դիմադրութիւն են ցոյց տւել, բայց վերջում ուղղամտութիւն պակասութեան պատճառով լքել են դիրքերնին: Հայ կոմիտէները հասել են այդ կողմի գաղթականների վրայ և բոլորին կոտորել են ու հօտերն էլ զբաւել: Խեղճերը անվերջ լալիս են ու մեզ հետ անդադար քալում: Կիներ, երախաներ, բոլորն էլ սաքերի տակ ընկնելով, անդադար քալում են: Ես երիտասարդ վիճակովս յոգնում եմ մինչև երեկոյ քալելով, խեղճ վառչիկները ինչպէս չյոգնեն: ձանադարը շափազանց նեղ է.

599-2002 (2001.) 565

շարժում ենք, բայց նրանք խանգարում են մեր ընթացքը: Պէտք էր նախապէս մտածել և սրանց աւելի շուտ ուղարկել: Տեսայ գաղթականներից մէկին, որի վիճակը շատ աղետարշ էր: Մի կին էր դա՛ մի երախայ գրկումը, մինն էլ շայակին կապած. բռնել էր ձեռքը մի մեծկակ երեխայի, որի կոնակին էլ ուզում էր կապել չորրորդ երեխային: Մեծկակ երեխան յոգնել էր ու լալիս էր. ոչ մի կերպ չէր կարող քալել. ճճ մահաւան սպառնալիք... սիրտ կարող է տոկալ այս վէրքերին: Ես և զինւորները լացինք. վերջը մեր ձիերի վրայ գրինք նրանց, բայց մէկ կամ հինգ հոգի չեն, որ մէկին հեծցնես: Անվերջ կերպով քալում են իրանց հօտերի և բեռցւած տաւարների հետ: Շատ ձախող է այս ընթացքը:

Մեր ձախ կողմից բաժանւում է Ամատիայի ճանապարհը. մենք թողնում ենք Կարասուն և մազլցում ենք ժայռոտ լեռները:

Առաջանում ենք Նորդուզի ուղղութեամբ. չափազանց վտանգաւոր դրութեան մէջ ենք. թիկունքնիս վտանգել է արդէն, իսկ առջևնիս էլ ամբհով չէ, որովհետև հաւանական է, որ թշնամին կտրէ մեր ճանապարհը. շատ ծանր ենք քալում: Մի ժամայ ճանապարհից հասել են մեր բեռները և ոչխարներ են մորթել, որպէսզի ուտենք. բայց տեղն ու տեղը թողնում ենք ու շարունակում ենք քալել:

Մի ջրից անցնելիս, ահա մութը կտրում է: Գուժարտակները իրար են խառնւել, բղաւում ու աղմուկում են: Վերջապէս անցնում ենք ու քալում. մի երրորդ ջրից էլ ենք անցնում և համնում ենք մեր իշկանը:

Ջրից անցնելիս մեր քաշած թշառութիւնը աննկարագրելի է. շրջուն հիւանդանոցը խառնւում է զինւորներին. հիւանդները կախում են ձիերի պոչերից. վերջապէս մի թշառութիւն է սա, որ չի կարելի նրկարագրել: Եթէ այդ բոպէին, Ասուած շանէ, մի խումբ ձիւորներ մեր վրայ յարձակւեն, մեկ բոյորիս կարող են կոտորել:

Մի գիշեր հանգստանում ենք Բագկան լեռների հիւսիսային արևմտեան լանջի վրայ. յաջորդ առաւօտուն լուում են մի քանի հրադէնի ձայներ, և մենք անմիջապէս գէնքի գլուխ ենք անցնում. մենք այժմ պահեստի գունդ ենք:

Երեկոյեան կողմը էլի շարժում ենք և անցնում ենք մի ջրից: Մութը սկսւում է, երբ բարձրանում ենք լեռը. թնդանթի և ուղմամթերքի ձիերը ընկնում են. ուղմամթերքի մնդուկները գլորում են. մենք գաընւում ենք լեռան ստորոտում, բայց Ասուած մեզ ազատում է փորձանքից: Մնդուկները իրանց հետ գլորեցին տարան իմ շավուշներից մէկին և զինւորներից երկսին. կարգ ու կանոնը խանգարւեց. ուղմամթերքի մնդուկները զինւորների շարակը գրինք ու բարձրացանք:

Այժմ էլ մի մեծ ջրից պիտի անցնենք. կամուրջ կայ թէև, բայց գաղթականները բռնել են կամուրջը և հնարաւորութիւն չեն տալիս անցնելու. վերջապէս սպառնալիքի ուժով անցնում ենք: Ահա լոյսը բացւում է. քալում ենք մի բլի աջ ստորոտից, աջնքան վտանգաւոր դրութիւն է, որ ամեն բոպէ կասկածում ենք, թէ ահա հիմա կամ մի բոպէից կրակ պիտի բաց անեն

մեզ վրայ. իսկ եթէ թնդանօթաձիգների հանդիպենք, մեզ բոլորովին կարող են փշացնել:

Վերջապէս ապահով կերպով անցնում ենք:

Ձինւորները սոված են և անքուն, այլևս կուելու ընդունակութիւն չի մնացել. չափազանց կամաց ենք քալում:

Վանի ուղղութիւնը թողինք. այս իրիկեան մեր իջեանը պիտի լինէր Շահաստը (?), ուր ասում են թէ ուսաները բռնել են արդէն. Ձէվտէթ բէշի յոյսերը ի դերև ելան: Այժմ Մէրվանան պիտի զնանք:

Մէրվանանում հանգստանում ենք. զինւորներին կերակուր են տալիս: Մէրվանան թէև քարտէզի վրայ խոշոր տառերով նշանակւած է, բայց 2—3 անից բաղկացած մի գիւղ է. նրա հարաւային կողմերը ամբողջութիւններ ենք շինել, գնում ենք այնտեղ հանգստանալու:

Արևմտեան բլուրների վրայ նշմարել են թշնամու հեծեալ և հետեակ խմբերը. գիմացի կողմը անցնելու համար մի խորունկ առեից ենք անցնելու, բայց չի կարելի քալել. չի կարելի զինւորներին հրամայել, որովհետև անօթի ու անուսղ են և անքուն. վերջապէս մէկ ու կէս ժամայ ճանապարհը կարեցինք 4 ժամայ մէջ: Հէյ վախ, ասում եմ, գիմացի կողմը չպիտի կարողանանք անցնել և մեր նահանջի զիծն էլ պիտի կտրւի: Բայց արի տես, որ մեր առջևի կողմը ճանապարհները միանում են. այժմ միայն հասկացայ, որ մեր նահանջի զիծը ապահովելու համար ենք եկել այստեղ:

Պաշտօն առինք հսկելու Մէրվանանի հարաւարևմտեան բլուրների վրայ: Յաջորդ օրը տեսանք, որ թշնամին մեր թիկունքը փակել է. մեր գունդը կուի

բռնեց. ես մեծ դժարութեան մէջ էի. բարեբաղդաբար թշնամին քաշեց Մէրվանանից: Ապրանքները անց կացրի մի ջրից: Մի գիշեր և մի ցերեկ հանգըստացանք Աւանի սարահարթում, իսկ առաւօտեան կողմը ճամբայ ընկանք:

Ճանապարհ չկայ. լեռների վրայից ենք քալում. ձիւնոտ և քարքարոտ ճամբաներից անցնելով՝ գնում ենք դէպի Բիթլիզ: Ուտեստ չկայ. անասունները սոված են ու չեն կարող քալել. սրանից աւելի մեծ տանջանք չի կարող լինել: Այսօր մեր ոտքերը միշտ ձիւն են կոխում. ջրի միջից ենք քալում: Ասուած չանի, եթէ մարդս ձմեռ ատեն այստեղերից անցնելու լինի. նա պիտի սառի ու գայլերի կերակուր գտնայ:

Անցանք մի քանի բլուրներից և վերջապէս ձորի նման մի տեղի հանդիպեցինք, որը բաւական բերրի ու գեղեցիկ հող ունէր. իսկ գիւղերը, ինչքան բանաստեղծական են. ափսոս, որ ամեն կողմից սեղմւած են լեռներով և ոչ մի կողմից յարաբերութեան ճանապարհ չունեն. մի վայրենի տեղ է այս, բայց հաւանական է, որ եթէ այստեղի գիւղացիներին հարց տրւի, պիտի պատասխանեն, որ գոհ են իրանց վիճակից: Դնչ որ է, այստեղ մի քիչ ցորեն ու ալիւր ձեռք գցեցինք. առջևից ուղարկել են ժանդարմներին, որպէսզի ուտեստի գործը կարգադրեն: Եկել են նաև ուղտապանները, որոնք որպէս թէ ժանդարմների հետ պիտի աշխատեն: Այսօրան մեր եկած ճանապարհը շատ կտրուկ մի ճանապարհ էր. փառք Աստուծոյ, քառասուն տարին մի անգամ մի խելացի գործ կատարեցին մեր հրամանատարները:

Այսօր հինգ ջրերից անցանք. թշնամու հետ այլ-

ևս չփում չունեցանք. երևում է, որ առանց Շատարի հանդիպելու պիտի անցնենք. նա մնացել է մեր աջ կողմը: Վերջին անգամ անցած ջուրը շատ խորունկ էր ու սրընթաց. ջրից անցնելուց յետոյ՝ հանգստանուս ենք Այանդաղ գիւղի մօտ:

Ճանապարհը երկուքի է բաժանուում. դէպի հարաւ երկնցողը՝ տանում է Մուսուլ, իսկ դէպի արեւմուտքը՝ Բիթլիզ: Մենք գնում ենք Բիթլիզի ճանապարհով. այսօրւայ մեր անցած հովտում գարունը նոր է բացել. մի ճիւղ եմ կտրում ու հոտոտում. ա՛խ, ասում եմ, մեր կեանքի գարունն էլ այսպէս է անցնում... Ասուած թող ոչ սքի արժանի չանէ վերջապահի կուի ու նահանջի, որովհետեւ յաճախ սարսաւորւում ես նահատակներին երեսի վրայ թողուլ ու քալել. սպանւածներին ոտքի կոխան ես գարձնում թշնամուն, վիրաւորներին չես կարողանում փոխադրել և դարձեալ թողնում ես թշնամու ձեռքը. եթէ ցանկանաս փոխադրել, որ փոխադրական միջոցներովդ պիտի վերցնես. անա մեր վիրաւորներէջ ոմանց փոխադրում են պատգարակներով. տես, թէ ինչպէս են սանում. խեղճերը ամենաշատը մի ժամ կարող են տոկար:

Աշխարհում կոխներից ամենից քաղցրը յարձակողական կոխն է, որովհետեւ դա չափազանց բարձրացնում է հողեկան գրութիւնը: Մխալում են նրանք, որ ասում են, թէ թիւրքերը ստեղծւած են պաշտպանողական կուի համար, ընդհակառակն, թիւրքերը փառաւոր կերպով գիտեն յարձակել: Դիլիմանի ճակատամարտը անաշատ վկայ է: Բացի այս՝ յարձակող. գօրամասի թիկունքում անպայման մի գաշտային հիւանդանոց է գտնուում. այնպէս որ՝ մարդ եթէ վի-

րաւորել էլ, մեռնի էլ, կարելի է լինում նրան փոխադրել թիկունքը:

Գալով պաշտպանողական կուին, դա թէև վատ է ազդում բարոյական կորովի վրայ, բայց այնուամենայնիւ գեղեցիկ կուի է:

Իսկ նահանջը... էհ, Ասուած այս բանը թշնամիիս էլ ցոյց չտայ: Մեր գունդը շատ խայտառակ զինւորներ ունի. զինւորական կրթութիւնը չափազանց թերի, իսկ բարեկրթութիւնը — իրանց հայրենիքի*) բերումով — չափազանց պակաս է: Ամեն օր զենքի արկած պատահում է. այսօր դարձեալ երեք հոգի զոհեցին. ուղղակի սպանում ենք իրար: Ասկից զատ՝ նահանջելիս, երբ մեր գումարտակը ամբողջութեամբ կուի է գնալու, ամուազն 20—30 հոգի պակաս են լինում. ասանապետները թոյլ են վերաբերում, զինւորն էլ իր մեծից չի վախենում, ինքն իրան արտոնութիւն է տալիս:

Թիւրքերը իսկապէս որ տանջանքի ու դժւարութեան տոկացող են. մի բուռ ցորեն ենք տալիս զինւորին, և նա երեք օր ճանապարհ է գնում. աշխարհիս որ բանակում կարելի է հանդիպել այս վիճակին:

Այանդաղից մեկնում ենք և բարձրանում երկու լեռ:

Այսօր անցանք երեք ջրից. նրանից մէկը բղխում էր ձեան տակից: Այսօրւայ մեր անցած տարածութիւնը սարահարթի պէս մի տեղ էր՝ 1000—2000 մեթր

*) Հայրենիք բառով օրագրողը ուզում է ասել, երեի, Տաճկաստանի արեւելեան գաւառները, որովհետեւ իր զինւորները այդ նահանջներից էին:

տարածութեան և ամփոփեա՞ լեռներով: Մեր աջ կողմում գտնուող լեռները ամբողջովին անտառապատ էին, իսկ մեր իջևանը չափազանց գեղեցիկ և ճոխ բուսականութիւն ունեցող մի տափաստան էր: Փառք Աստուծոյ, անասունները կշտացան խոտով. մինչև առաւօտ անընդհատ անձրև տեղաց: Քեասիմ բէյի ժանդարմներայի գունդը մնաց Ալանդաղ. ինչպիսիս ուսմները չպիտի յաջողին աւելի վարերը իջնել. մենք էլ Յիթլիզ ենք գնում: Ռուաների պրաւումը պիտի սահմանափակէի Վանի վիլայէթով:

Մեր զօրամասերի յարաբերութիւնը խզեց. այս իրիկեան մեր իջևանը եզդիներն գիւղի մօտ գտնուող խոտաշատ գաշտափայրն է լինելու:

Առաւօտեան շարժում ենք. մենք ամենից վերջն ենք մեկնում. մազլցում ենք չափազանց քարքարոտ մի լեռ. զինւորները մեռնում են սովից ու յոգնածութիւնից: Եօթերորդ գնդի երկրորդ վաշտի բժիշկը՝ Ճայեզ բէյը՝ մի գերեզման էր փորել տալիս, որովհետև մեր հին 4-րդ վաշտի զինւորներից մէկը հոգեվարքումն էր գտնուում: Աւելի յետև գտնուում էր մի ուրիշ մահամեքձ զինւոր երկրորդ վաշտից: Լեռը մազլցելիս տեսանք որ մի զինւոր ընկել էր թաց գետնի վրայ և հուււմ էր. «Ի՞նչ ունիս» հարցրի նրան, բայց պատասխան չտուի: Խեղճը վերջացել էր արգէն. սկսեց շունչը փչել:

Զինուոտ լեռը մեզ համարեա թէ ուժաթափարատ, բայց բարեբաղդարար նրա յետևում ուրիշ լեռ չկար: Մեր ձախ կողմից այնպիսի բարձր լեռներ են տարածուում, որոնց առջև նսեմանում են կարպատները: Քըրուում է, թէ սրանք Վանի և Մուսուլի միջև տարածուող

լեռները պիտի լինեն: Այսօր անցանք չորս ջրերից, որոնցից երկուքը փոքր էին, իսկ երկուքը մեծ: Հասանք իջևանը:

Ախ, թշառութիւնը դարձեալ սկսեց. զինւորներին ցորեն անգամ չենք կարող տալ. խոտ են ուտում: Իոկտօրն անում է, թէ «Ո՛ր զինւորի աչքին որ նայես, կը տեսնես, որ նրա փայլը բոլորովին չքրացել է: Ահագին յողթանդամ զինւորի մէջ ջրը տերակ չի մնացել. պարզապէս փայտ է դարձել. մարդկանց մօտ սերնդագործելու կարողութիւն էլ չի մնացել: Եթէ այս վիճակը մի շարաթ էլ շարունակէի և եթէ չկարողանանք սրանց մի յարմար տեղ հասցնել, բոլորն էլ պիտի մեռնեն»: Իոկտօրը աւելացրեց նաև, որ աիֆուսը սկսել է արդէն: Դաշտային հիւանդանոցը մինչև այժմ 100-ից աւելի զինւոր է թաղել:

Այսօրուայ մեր իջևանը Հոլթանդ անունով մի գաշտափայր էր. այսօր էլ անցանք 5-6 ջրերից, որոնցից մէկը մեծ էր. դարձեալ մազլցեցինք մի ձիւնոտ լեռ: Սրանից վերջ այլևս ձիւնոտ լեռներից չպիտի անցնենք, որովհետև սկսեցինք իջնել: Մեր ձախ կողմը տարածուում է մայրու մի ցանցառ անտառ, իսկ աջ կողմը Մասիբօ զեռը այնպիսի սոսկալի ընթացքով է հոսում, որ մարդս սարաափում է:

Այլևս ամառուայ եղանակն է սկսում. այս իրիկուն մեր իջևանը Մասիբօյի եզերքում մի տեղ է: Ախ, նորից անօթութիւն. թշնամիներից ամենամեծը: Զնայելով այն բանին, որ ամբաշէն գումարտակը մեզնից մի օր առաջ է հասել այստեղ, փայտի այս առատութեան մէջն իսկ չի կարողացել մի կամուրջ շինել. չեմ հասկանում, թէ էլ ինչո՞ւ ենք պահում այս գու-

մարտակը: Կարծում եմ, թէ նրա պարտականութիւնն է պէտք եղած ատեն կամուրջներ շինել, որպէսզի անցնենք, յարձակենք կամ նահանջենք: Վայ քեզի, ամբողջն դումարտակ...:

Այսօր ճանապարհին տեսանք, որ մի ձի էր սատկել. զինւորները բոկոտն լինելու պատճառով իսկոյն վրայ թափւեցին և նրա կաշուց մի-մի կտոր քերթեցին՝ տրեխ շինելու համար: Մի սոսկալի տեսարան է պարզում, երբ ճանապարհին խումբ-խումբ թաղում ենք հիւանդներին, կամ տեսնում ենք, որ զինւորներից ոմանք ճանապարհի եզերքը նստած աշխատում են բովել իրենց տրւած մի բուռ ցորենը, կամ թէ հում միս են կրծոտում:

Այսօր գրազեցինք Մասիրօ գետը անցնելով. Մասիրօն այնքան խոր ու սրընթաց գետ է, որին կարող է նմանել միայն Ջապը: Մեր ամբողջն գումարտակը դարձեալ ոչ մի գործ չի կատարում. անունը կայ, իսկ ինքը չկայ: Զինւորները հինգական հօգի իրար ձեռք բռնած մտնում են ջուրը. հոսանքը քշում է խեղճերին: Այսօր մեծ ծառայութիւն կատարեցին լողալ գիացողները. նրանք իսկոյն ձգում էին ջուրը և իրանց կեանքը վտանգի ենթարկելով ազատում էին խեղճ ընկերներին: Ահա սրանց շնորհիւ անցանք գետը՝ առանց կորուստի. բեռներն էլ անցան: Ասում էին, որ գետի ջուրը կէսօրից յետոյ բարձրանում է. իսկապէս, երբ կէսօրւայ մօտ մենք անցանք, ջուրը արդէն սկսել էր բարձրացալ, իսկ երեկոյեան կողմը այնպիսի մի վիճակ ստացաւ, որ այլևս անկարելի էր անցնել:

Զինւորների վիճակը շատ անտանելի է. մարդիկ անօթութիւնից մեռնում են. սա ինչ խայտառակութիւն

է. խեղճերը մի բուռը ցորենի էլ գոհ են, բայց այն էլ չկայ: Անօթութիւնը նիհարեցնում է մարմինները, իսկ կլիմայական յանկարծակի փոփոխութիւնները մահուան են դատապարտում նրանց: Երէկ քսան հօգի կորցրինք: Աման, Ասուած իմ, սա ինչ տառապանք է: Իներրորդ զնդումն էլ տիֆուսը սկսել է երևան գալ, ի հարկէ այդպէս պէտք է լինէր, որովհետև անօթի ու անաւաղ զինւորը 40 քիլոնոց բերը շալակած ճամբայ է կտրում: Զինւորների շորերը արդէն սոսկալի են. նրանցից մսի հոտ է գալիս, որովհետև հում միս են դնում իրանց պարկերի մէջ: Այժմ վախեցում խոլերայից:

Առաւօտեան շարժում ենք. շրջակայքում տարածում են անտառներ. մենք անցնում ենք չափազանց բարձր մի լեռնային անցքից: Զինւորները անօթութիւնից սկսել են նւաղել. անվերջ կերպով խոտ են ուտում:

Լեռնանցքից անցնելուց յետոյ մտանք մի շատ բերրի հովիտ: Բոլորի մարմնումն էլ նկատում է մի ընդհանուր թուլութիւն: Մինչև հովիտն անցնելը՝ բոլորս էլ ուժաթափ եղանք ու հանգստացանք մի ջրի ափին:

Մեր վաշտի պարենաւորման գործի պատճառով զինւորները սոված են մնում. ուրիշ վաշտերի սպաները ալիւր են ձեռք բերում և զինւորները հանգստանալիս ուտում են, իսկ մերիները՝ նրանց գիտում: Մեր պարենաւորման գործը սանող սպան որպէս թէ գործունէութիւն է ցոյց տալիս, բայց իսկապէս դա ոչ թէ գործունէութիւն է, այլ ուղղակի շահագործում: Վաշտի հրամանատարն էլ յարմարել է նրա հետ և

նրան գովում է: Մի հարցնող լինի, թէ վաշտի հրամանատարը թնշ գործ ունի պարենաւորման հարցի մէջ. չէ՞ որ նա միայն կոնտրոլի իրաւունք ունի:

Ծանապարհի երկու կողմերը շարեւէ են հարիւրաւոր գինւորներ, որոնք յոյսը կտրել են կեանքից միայն մեր վաշտից 150 հոգի ետ են մնացել. երկու մեռնողները դիակներն էլ հիմա հասան: Ամեն մի օր տեղի ունեցող մահերի թիւը 20-ից մինչև 50 է:

Առաւօտեան շարժում ենք. դարձեալ ալիւր չը կայ. բայց վերջապէս գունդը մի քիչ սթափւեց և առինք. գինւորները մէկ-մէկ հատ տաք հաց կերան: Այսօր էլի երկու ջրերից անցանք, որոնցից մէկը մեծ էր ու սրընթաց: Մազլոցեցինք երկու բարձր լեռներ. երեկոյեան կողմը հերկած արտերի մէջ նկատեցինք հեռագրաձողեր: Անկարելի է նկարագրել այն ուրախութիւնը, որին առիթ տւին այդ ձողերը: Մեր աջակողմը գտանք մի շատ գեղեցիկ գիւղ. Բէրվարի գաւառակը մնաց զէպի մեր աջակողմը՝ մէկ ու կէս ժամւայ հեռաւորութեան վրայ: Հանգստանում ենք մի անջրդի դաշտավայրում: Մեր հիւանդներին դարձեալ թողինք Սասիսէր գիւղաքաղաքում, որը Բէրվարի գաւառակի կենտրոնն է. այս կերպով անվերջ նւագում ենք: Գեաւառում թողած մեր հիւանդներից ով որ կարողացել է փախչել, փախել է, իսկ մնացողները ընկել են հայերի ձեռքը և սպանւել են: Այստեղ դարձեալ թողնում ենք հիւանդներին, և զէնքերով մէկտեղ ենք թողնում. անպայման սրանց էլ ենք մահտան գատա-

պարտում: Ասուած թող մեր թշնամուն անգամ չը հիւանդացնի*):

Սալիլ էֆէնդին ուղարկել էինք գիւղաքաղաք. նա ասում է, որ շատ գեղեցիկ տեղ է. այնտեղ միլիցիայի կազմակերպութեամբ են զբաղւում. նշանակում է, որ տեղեկութիւն չունին՝ պատահած դժբաղդութեան մասին. ուրեմն եթէ մեր անցած վայրերում իշխանութիւնը հաստատ է, նշանակում է մենք չպիտի՞ ունենանք: Մինչև այստեղ մենք իշխանութիւն կազմակերպել ենք:

Սալիլ էֆէնդին սուպ և կարկանդակ է բերել գիւղաքաղաքից: Փառք Ասուածոյ, որ կարկանդակի երես տեսանք: Այս գիշեր Համբարձման գիշերն է. թող բարձրեալն Ասուած, ի պատիւ այս գիշերւան, ապահովութիւն և փրկութիւն շնորհէ մեզ:

Սև գործ. — Իտալիան էլ մեզ և Աւստրիային պատերազմ է յայտարարել. դրութիւնը ծանրացել է. նեղուցները ճնշել են և երկու նաւ զոհ են տւել, հիմա տեսնենք, թէ Ռումանիան, Բուլղարիան և Յունաստանը թնշ պիտի անեն: Ով Տէր, դու ապահովութիւն տուր, դու խղճն իսլամութեան:

Այսօր հանգստանում ենք:

Սալիլ բէյը, ի վարձ իր ծառայութեան, նշանակւել է աջ թևի գրուպպի հրամանատար. ստացել է նաև գնդապետի աստիճան. մենք բանակի ենք փրածւել:

*) Այս խօսքը մի ձև է՝ ցոյց տալու համար դժբախտութիւնը. հետևաբար չը պէտք է հասկանալ՝ իր տառացի իմաստով և ընդունել իբրև բարի կամեցողութեան անկեղծ մտղթանք:
Օ. Թ.

Հինգերորդ փոխադրական գործառնար և 36-րդ կիսաբաժինը (գիւրգիւս) մեզի պիտի միացւին: Համայնում գտնուող 36-րդ կիսաբաժինը ամսի 19-ին Եղեսիայից անցել է, հիմա հաւանական է, որ Բիթլիզ գայ. իսկ մենք գնում ենք Սղերզ՝ այնտեղից Բիթլիզ երթալու համար: Մեր գումարտակը պաշտօն է ստացել հաւաքելու ետ թողւած հիւանդներին: Դաշտային հիւանդանոցը ուղղակի Բիթլիզ պիտի փոխադրւի: Փառք Աստուծոյ, այսօր մի քիչ ուռեկիքի երես տեսանք:

Ես բաւական անհանգիստ եմ, որովհետեւ մի անգամից շատ քանակութեամբ սուպ ու կարկանդակ կերայ:

Այստեղի ժողովրդին էլ հրամայւած է գաղթել: Առաւօտեան մեկնում ենք. ճանապարհը բոլորովին անտառապատ է. այնպիսի գեղեցիկ տեսարան է պարզուում, որի վրայ անկարելի է չհիանալ: Ճանապարհը դէպի աջ էր գնում, իսկ մենք շեղւել ենք ճանապարհից. ոչինչ, պիտի կուենք թէ ծարաւի, թէ բնութեան և թէ թշնամու դէմ: Վերջապէս հանդիպում ենք մի մեծ ձորի, ուր կուշտ-կուշտ ջուր ենք խմում. այլապէս բոլորս էլ անջրութիւնից պիտի կոտորւէինք: Կէսօրին հանգստանում ենք մի տանձենիի հովանու տակ: Այստեղ աղի ածուներ են շինել և մեծ քանակութեամբ աղ ստացել: Ստիպում ենք մինչև երեկոյ մնալ այստեղ, որովհետեւ ճանապարհները շատ նեղ են և մենք մտել ենք մի նեղ անցքի մէջ: Երեկոյեան կողմը մի քիչ քալում ենք, բայց ահա գիշերը վրայ է հասնում. այժմ նոր հասկանում ենք, որ սխալ ճամբու ենք հետևել. ինչ կարող ենք անել: Մեր առջևից գնացող գնդերը արդէն հասել են իջևանը. մենք էլ

ընկնելով կանգնելով հասնում ենք մի հայ գիւղի մօտ և գիշերում ենք այնտեղ: Գիւղի ժողովուրդը փախել է. մի փոքրիկ գիւղ է դա, որի շրջակայի արտերը հերկւած են. մարդիկ իսկապէս որ աշխատասէր են և իրանց գոյութիւնը ամենուրեք սպացուցում են. հաւանական է, որ յիշածս աղահանքն ու ածուներն էլ հայերին են պատկանելիս եղել:

Բիթլիզի վիլայէթը այնքան հողեպարար մի շըրջան է, ուր բնութիւնը ասես թէ մարմնացած բանաստեղծութիւն լինի:

Սոսկալի տաքերը սկսել են արդէն. մեր ճանապարհը բարեբաղաբար մօտ է:

Կարևոր փոփոխութիւններ.— Խալիլ բէյը գնդապետի աստիճան ստանալով նշանակւեց աջ թևի գըրուպի հրամանատար, մեր գնդի Գէմալ բէյը երկրորդ շրջանի պատերազմական խորհրդի նախագահ, մեր գնդի հրամանատարը՝ կիսաբաժնի հրամանատար: Մարզ եթէ բաղդ պիտի ունենայ՝ այսպիսին պիտի ունենայ: Մեր Շինասի բէյն էլ՝ կիսաբաժնի կցորդ է նշանակւել. նրան էլ փախցրինք. իսկ Բիզա էֆէնդին՝ վաշտապետի օգնական: Ամենքը բարձրանում են. իսկ մեզ վերցնում են մեր գումարտակից և ուզում են նըշանակել ուրիշ գումարտակի վրայ: Եղբայրս՝ Սայիդ էֆէնդին էլ վաշտապետի օգնական է եղել:

Գնում ենք Բիթլիզ: Սղերզը 4 ժամով հեռու է Սալմանասի կամրջից. մենք այնտեղ չենք հանդիպելու. թուում է, թէ Բիթլիզումս էլ հանգիստ չենք մնալու, որովհետեւ ուռաները Ախլաթումն են:

Տաքերը անտանելի դառնալու տատիճանին են

հասել: Այսօրուայ մեր ճանապարհը կարճ էր, ուստի բանակի բեռների հետ միասին հասանք:

Առաւօտեան շուտ մեկնում ենք. մի քիչ գնալուց յետոյ, տեսնում ենք որ մեր ձախ կողմից հոսող ջուրը խառնուում է Բոնտանի ջրին: Բոնտանի գետը շատ մեծ է և ընթացքը ուժգին. մեր ձախ կողմը դանուող ջրից անցնում ենք մի տախտակեայ կամրջի վրայով: որը պցւած էր հէնց երկու ջրերի խառնուելու կէտում: Ճանապարհները չափազանց նեղ են, այնպէս որ՝ զոյգ զոյգ ենք քալում: Իէպի մի դաւառակ տանող ճանապարհը ի հարկէ այսքան է լինում: Այսօր քալիցինք անտանելի շոգի տակ. շատ վտխենում ենք խոլերայից:

Երեկոյեան հանգստանում ենք Թախթիվաջիբում: Խոխերից սկսած մինչև այստեղ մեր ճանապարհի վրայ գտնուած գիւղերում բնակելիս են եղել Բէգէբլեանիները. սրանք մահմեդական լինելով մէկտեղ՝ կողմնակից են եղել ուսմաներին. սպանել են մեր զինուորներին և զէնքերը խլել: Խալիլ բէյը քանդել տեց սրանց գիւղերը. իսկ յանցաւորներին ձերբակալելով, ճանապարհի վրայ յղորդին էլ կախաղան բարձրացրեց: Ինչ գեղեցիկ տեսարան էր. բայց ավստն չամաներին: Մարդս հրճուում է, երբ տեսնում է, որ այսպիսի փճանալիքները անպատիժ չեն մնում:

Առաւօտեան շարժում ենք. այսօր պիտի անցնենք կամրջից. բայց երկար ենք սպասում, որովհետև պարտաւորւած ենք մէկիկ-մէկիկ անցնել: Քարտէզի վրայ նշանակել են քարտշէն կամուրջ, մինչդեռ ջրի մէջտեղը մի քարէ սիւն են կանգնեցրել, իսկ վրան գցել են տախտակներ ու գերաններ և այս կերպով կամուրջ ձևացրել. մարդ վախենում է նրա վրայից

անցնելու. վրան կոխելիս՝ կամուրջը երերում է. հէյ խեղճ երկիրներ...

Ինչ որ է, այսօր էլի մազլեցիներ երկու լեռներ և յետոյ պատահեցինք չափազանց գեղեցիկ մի սարահարթի: Օրհնւած հողից ինչեր չեն բուսնում. ահա բրնձի արտերը՝ անվերջ ու անհատնում: Մարդս ինչքան հրճուում է, երբ լեռնային վայրերում հանդիպում է այսպիսի բերրի հողերի: Դաշտը մտնելիս՝ մեր աջ կողմում տեսնում ենք մի աւերակ բերդ. հաւանական է, որ դա դէրէրէյութեան շրջանի Գնացորդներից է:

Երեկոյեան հանգստանում ենք Գիւլմիխ անուն տեղում: Մի բլրի վրայ ենք, ուր կան 3—4 ծառեր. շրջապատի վրայ նայում ենք թռչունի աչքով. արեգակը մայր է մտնում մեր հանդիպակաց կողմը: Ինչ տխուր տեսարան է. սխ, ինչ մեծ տարբերութիւն կայ Պոլսի և այստեղի արևամուտների միջև, ախ, միթէ՞ մենք էլ այս արեգակի պէս մայր պիտի մտնենք ու մարենք:

Այսօր Շարան ամառ տաջին օրն է: Մահիկը էլի բարձրացել է:

Ասուած իմ, ի պատիւ այս օրհնած ամիսների, մի թոյլ տար, որ Խաչը ոտնակոխ անէ Մահիկին: Այսօր բարի լուրեր կան, եթէ սակայն ճիշտ են. — Արդահանն ու Կարսը ընկել են. միաժամանակ ընկել է նաև Վարշաւան. աման Ասուած, այսպիսի օրեր ցոյց տուր մեզ: Սղերզում կոտորել են 2000 հայերի. Մղերզի ժանդարմները անցեալ օր վերադարձել էին ույնտեղ. ասել է, որ մաքրագործելու համար էին դարձել. Իրարբէրիումն էլ են կոտորում. Ասուած իմ, արժանի արն մեզ յաղթութեան հրճանքը վայելելու:

Մեր դառնւած բլրի հիւսիսակողմից գնում է մի

ճանապարհ, որ կարծում եմ Վանի ճանապարհը պէտք է լինի, զէպի հարաւ երկարողը Սղերդի ճանապարհն է, իսկ զէպի արևմուտք ձգողը՝ Բիթլիզի: Ասում են, որ մեր բանակները Թորթում պէտք է լինեն:

Մի գուժաբեր առաւօտ է. վաշտի հրամանատարը ինձ նշանակել է երրորդ գումարաակի վրայ. թէև այդ գումարաակի հարիւրապետն էլ լաւ մարդ է, բայց ես իմ հարիւրապետից ոչ մի վատութիւն չեմ տեսել. մասնաւոր ինչ արգարութիւն է՝ ինձ նորից ուղարկել մի անձանօթ զօրամասի մէջ, երբ հազիւ եմ կարողացել իմ զինւորներին ու տասնապետներին անուշները սովորել: Վաշտի հրամանատարի այս քմահաճ կարգազրութիւնը դրդում է ըմբոստանալու: Երբ զնացի իրեն խնդրելու, ասաց. «Այդ մէկ խնդրի մասին մի խօսիր, ինչ ուզում ես խօսիր»: Ես զայրութիցս լացի: Ծանապարհին նա ինձ ասաց, որ իմ մասին անիրաւութիւն է կատարւել. հետևաբար քչեով պիտի վճռէ հարցը:

Խայտառակ Սադին, որ ընկերս պէտք է լինի, անտանձան կերպով ուրախ է. անամօթութիւնն էլ այս քան է լինում. մարդ գոնէ զգացումը իր մէջն է պահում, իսկ նա իր ուրախութիւնը բացորոշ կերպով յայտնում է ու երեսիս խնդում: Ով ամենակարող Ասուած, իմ զլխիս տւած այս դժբաղդութիւնը նրա գլխին էլ բեր, որպէս զի իր անամօթութեան պատիժը կրէ:

Ծանապարհին մօտս եկաւ իմ սիրելի եղբայր Շինասի բէյը: «Տեսնո՞ւք զլխիս եկածը» — ասի իրեն. — «Ես հազարապետիս խօսեցի. նա քեզ պիտի վերցնէ և Սադիին պիտի նշանակէ» — պատասխանեց: Ով երիտասարդ, միայն Ասուած գիտէ, թէ ինչպիսի ուրախութիւն պատճառեցիր սրտիս՝ քո այդ խօսքերովդ: Ասուած

իմ, քո ողորմութեանդ եմ ապաւինում. դու լաւ ես իմանում, Ասուած իմ, որ քեզնից բացի ուրիշ օգնական չունիմ: Իսկ Բիզան. . . նա ինձ մօտ գովում է իր հարիւրապետին. ես իմ գումարդակիցս պիտի քոծանւեմ, իսկ նա բոլորովին անտարբեր է: Այս աշխարհը շահի ու խայտառակութեան աշխարհ է:

Յուսահատական վիճակով այս առաւօտ էլի շարժում ենք. նորից մագլցում ենք բլուրներն ի վեր:

Այսօր երկու ջրերից էլ անցանք (կամուրջով). մեր ճանապարհը անցնում է Շիրվան-Կիզիլէ գաւառակի միջից: Ես գնում եմ գաւառակի կենտրոնը և առաջին առիթով հինգ լիրա ուղարկում մօրս՝ ինչպէս որ մեկնելիս խոստացել եմ:

Մեր անցած երկրորդ ջուրը Թահվանի (?) ջուրն էր, որի վրայ զցւած էր մի գեղեցիկ կամուրջ: Հանգստանում ենք այդ ջրի արևմտեան կողմը:

Այսօր գետի մէջ լողացայ. գետի հարաւակողմից ձգւում է այն շօւէն, որ տանում է Սղերդ, իսկ կամուրջից անցնող ճանապարհը տանում է Բիթլիզ: Հանգստանում ենք Թահվան գիւղում. իսկ առաւօտեան ճամբայ ենք ընկնում:

Բարձրանում ենք չափազանց բարձր մի լեռ. հազարապետը գալիս է մօտս ու ժպտում երեսիս. իսկ ես նայում եմ տխուր զէմքով: «Այդ ինչ է Հազգի էֆէնդի, ինչպէս ես» — հարցնում է նա, որին հետևեալ խօսքերով եմ պատասխանում. — «Ամբողջ յոյսս ձեզ վրայ է, հազարապետ էֆէնդի»: Հազարապետն աւելացնում է. — «Ինչպիսի, հոգ մի անիր, վաղը պիտի փոխեմ»:

Հազարապետը տեսնեց նաև Շինասի բէյի հետ և նրան ասաց. «Մի մեղք ունեմ, որ վաղը պիտի քուժեմ. երեկ երեկոյ մոտացել էի». ապա դառնալով զէպի ինձ՝ հարցրեց. «Սադի էֆէնդին ինչ է ասում»: — «Կա-

տակում է, հրճում է իմ վիճակիս վրայ» պատասխանեցի ես:—«Քեք պիտի քաշել տամ և նա պիտի երթայ» ասաց:—«Տէր իմ, առանց քեզի չի լինում»—հարցրի ես:—«Ո՛չ,—պատասխանեցինս,—անպատճառ քեք պիտի քաշել, բայց քեզն նրան պիտի դուրս դայ»:

Դարձեալ յուսադրեցի. դարձեալ պիտի սպասեմ մինչև վաղը: Ա՛խ, ինչքան անտանելի է սպասողական դրութիւնը:

Հազարապետը յետոյ Մազի էֆէնտիին էլ խօսեց ու ասաց. —«Վաղը դու ինքդ պիտի գնաս»: Մարդը յանկարծ ապշեց ու մնաց:

Երէկ երեկոյեան երեք լիրա էլ ուղարկեցի եղբորս. ես փողս չեմ ուտում, գոնէ մայրս ու եղբայրս թող ուտեն. մի է իմանում՝ այս փողերը ինչքան ուրախացնում են երկուքին էլ: Այն հինգ լիրան, ներկայ նեղ դրութեան մէջ, երկու ամուսայ համար բաւական է մօրս. նա խնայող է: Իսկ եղբայրս շատ դճ մնացած կը լինի, որովհետև սեւե կիւմուտ չունի և հետեարար նիւթական անձկութեան մէջ է գտնուում: Իմ ցոյց տւած ներկայ օգնութեան շնորհիւ, նա մի երեկոյ երկու բաժակ էլ աւելի պիտի խմի իմ կենացը: Ես այսպիսի ժամանակ եթէ նրանց չօգնեմ, էլ ի՞նչ պիտի անեմ փողերս: Յոյս ունեմ, որ քանի ողջ եմ, առանց փողի չպիտի թողնեմ նրանց:

Այս իրիկեան մեր իշխանը Չալիէսօրն է (կարմիր արտը):

Ուրախալի լուր. —Ստում են, որ սուսները Բեսարաբիա են մտել. բայց երկու օր անաջ մի թերթ էլ զրում էր, որ գերման ցեղախններ ուժակոծել են Օդեսսան և սոսկալի աւերումներ ու հրդեհներ են առաջացրել: Անհաւանական է, որ ցեղախններ Բերլինից թռչելով հասնէին մինչև մեր կողմերը. բայց տեսնում

հնք անա. որ կարպատներից ու Գալլիցիայից թռչելով մօտեցել են Բեսարաբիային:

Առաւօտեան մեկնում ենք. մեր առջև ցցւում է մի բարձր լեռ, որի վրայ հնք բարձրանում՝ հազար դժւարութիւններով: Այս երկրամասի այսքան անտառապատ լինելը ենթադրել է տալիս, որ առատ ու համեղ ջրեր էլ պէտք է ունենար. բայց դժբաղդաբար վատն էլ չի ձարւում. մի չոր հող է պարզապէս:

Կուսակալութեան և փոխ-կուսակալութեան կենտրոններին իրար կապող ճանապարհը շտեմնողը ենթադրում է, որ կանոնաւոր շօտէ պէտք է լինի. բայց Աստուած քանդի այդպիսի շօտէն: Փատիկայի(?) ճանապարհը հազար անգամ լաւ է, մեռանք, սպանեցինք այս ճամբաներում. երբէք սչ մի ջրի չենք հանդիպում: Վերջապէս հասնում ենք մի մեծկակ առւի, որից անցնում ենք կամրջով. այժմ այդ ջուրը հոսում է մեր աջ կողմից. չափազանց սառն ու վճիտ մի ջուր է. զինուորները վրայ են թափում և անվերջ խմում:

Ջրի ձախ կողմից ձգւում է չափազանց գեղեցիկ մի շօտէ, որ տանում է Բիթլիզ. սա Բիթլիզ-Դիարբէքի շօտէն է և չի նմանում միւս շօտէներին. սա շատ կանոնաւոր է: Երկու կողմից բարձրանում են անտառապատ լեռներ. իսկ ջրի երկու ափերին կան թութի, ունարի և ընկոյզի բազմաթիւ ծառեր: Հանգստի ժամին նստում ենք ջրի ափը. կշտանալ անկարելի է:

Այսօր ճանապարհին հանդիպեցինք երկու ժանգարմների, որոնք տանում էին 40—50 հայ կիներ, տղամարդիկ և երեխաներ. ոտաբոբիկ էին նրանք ու լալիս էին. հաց էլ չունէին: Մարդ ցաւում է այս բաները անանելով, բայց պէտք չէ ցաւել. անպիտանները ամբողջովին միկրոպներ են. թո՛ղ յանուն հանրային

ապահովութեան՝ սրանք էլ գնան... Թող գնան տեանելու իրանց ցանկացած՝ անկախութիւնը: ժանդարմներին հարցրինք, թէ ուր էք տանում սրանց, ու պատասխանեցին, թէ մի քիչ տեղ էլ պիտի տանենք և յետոյ բոլորին պիտի սպանենք: Ճանապարհին հանդիպեցինք նաև մի հայ կնոջ դիակի, որին անհող կերպով ձգել էին ճամբի մէջտեղը:

Իմ գործս իբր թէ այսօր պիտի վերջանար, բայց նորէն ոչ մի ձայն չեղաւ. երեկոյեան իջնանում նոր էի բերանս բաց արել, որ այդ մասին խնդրէի Ռիզա էֆէնդիին, երբ նա դարձեալ սկսեց իր հարիւրապետին գովել. Ռիզան որպէս թէ ուղղութիւնից չի շեղւում. նա անցեալ օր ինձ ասում էր. «Եթէ թիկնապահութիւնը ընդունեցի, դա նշանակում է, որ ես անպատիւ մտրդ եմ». բայց այժմ գնաց և ընդունեց ու որանով ցոյց տւեց, թէ ինքը ինչ մարդ է: Հիմա իմ ցաւս ինձ բաւական չէ, դեղի հրամանատարն էլ ինձ յանդիմանեց մի ինչ-որ մարդու կորուած եզան պատճառով. ամեն մարդ իմ գլխիս գիտնական է դարձել:

Այսօր ինն ժամ ճամբայ ենք քայլել և հիմա Իիթլիդից երեք ժամով հեռու ենք. ճանապարհին մեր տեսած 40—50 հայերին հանդիպելուց առաջ հանդիպեցինք բահ ու բրիչաւորներին. նրանք փոսեր էին փորում, իսկ միւսներն էլ մէկ-մէկ, երկ-երկու ճամբում էին Մարդօ փաշայի մօտ:

Երեկոյեան, երբ վիշտս ծայր աստիճանի էր հասել, տեսայ Շինասի բէյին, որ Սալիլ էֆէնդիից հարցրել էր իմ մասին և ապա աւելացրել, թէ «Թող Սաղին խալթ չանէ, քեզնից էլ կարող է հազարապետ դուրս գալ»: Իսկ յետոյ աւելացրեց. «Կիսաբաժնում բաց պաշտօն կայ, գալիս ես»: «Մեծ գոհունակութեամբ».— պատասխանեցի ես:

Մարդկութիւնն ու վեհանձնութիւնն էլ այնքան է լինում. ո՞վ պատւաւոր ու վեհանձն մարդիկ, թող Ասուած գոհ լինի ձեզնից: Շինասին ինձ ասաց, թէ «Սաղի էֆէնդին ծագրում է. զնա չունի: Պիտի տեանի հետեանքը. վայ իշի քուռակ, վնայ»:

Շինասի բէյը դեռ չեկած՝ ես գնացել էի հազարապետի մօտ. «Այն, քէ պիտի քաշի, ասաց հազարապետը. Սաղի էֆէնդին գիտէ՞ արդեօք, որ այս իրիկուն քէն իրեն պիտի ընկնի»: Ես ժպտացի և ուրախացայ: Այդ ըրպէին Շինասի բէյը եկաւ և հազարապետին յայտնեց, որ քէն քաշեց և երրորդ գումարտակը Սաղիին բաժին ընկաւ: Ես չկարողացայ աւելի սպասել, որովհետեւ հազարապետն ինձ ասաց, թէ «Հայդէ, գնա քո գումարտակի մօտ»: Ես անմեջապէս հաւաքեցի զոյքերս և առանց երրորդ հարիւրապետին հանդիպելու եկայ իմ տեղս: Սաղին ինձ տեսնելով ասաց, որ «Մինչև հազարապետը հրաման չգրէ՝ չեմ գնում. իմ մասին անիրաւութիւն է եղել և այլն», ու դեռ սրանց նման մի կարգ ավեղ-ցփեղութիւններ:

Հապա ինչպէ՞ս, անպիտան. եթէ ես գնայի, անիրաւութիւն չէ՞ր լինի:

Վերջապէս Ասուած թող գոհ լինի Սալիլ էֆէնդուց, որ աշխատեց, Շինասի բէյին խօսեց և գալուս համար էլ չափազանց ուրախացաւ:

Առաւօտեան ճամբայ ենք ընկնում: Մեկնելուց առաջ տեսայ, որ ճամբան տղերքը մի հայ կրիխայի էին թաղել, որպէս թէ գլուխն ու ձեռքերը հողից դուս էին թողել և քթից ու բերնից արիւն էր հոսել*):

*) Երևում է, որ ողջ-ողջ են թաղել ու երեխան շարժւելով հողից դուրս է հանել գլուխն ու ձեռքերը. քթից ու բերնից արիւն հոսելը նոյնպէս ապացուցում է մեր կնթաղութիւնը: Ծ. Թ.

+

Ճանապարհի երկարութեան հոտող ջրի ասիին հանդիպեցինք դարձեալ չորս հայերի գիակների. նրանցից մէկի մարմինը, տոնանդամն ու ամորձիքները չափազանց ուռել էին. մէկն էլ նստատեղիում խոշոր պաշար ունէր (երևի վախից էր առաջացել), միւսներն էլ զանազան տեսակ այլանդակութիւններ ունէին: Բոլորի մարմիններն էլ ծածկւած էին բազմաթիւ վերքերով. այնպիսի մի զզւելի տեսարան էր, որ չի կարելի նկարագրել. թող որ անցնեն գնան: Առանց գիտնալու կուշտ-կուշտ խմեցինք դիակներով լեցուն ջրերից. չես հասկանում, թէ ինչու գիակները թողնում են բաց օդում և ապականում են մթնոլորտը:

Կատարեալ անկախութիւն ասիք հն... ձեր աստորժակը պահեցէք միւս աշխարհի համար... Դարձեալ զարշահոտութիւն է զգացում. նայում ենք ու տեսնում մի ուրիշ դիակ էլ՝ բոլորովին սեպցած. մարդկանց բոլորովին մերկացնում են և այնպէս սպանում: Մի քիչ էլ ենք առաջանում և ահա բանակիտողի մօտ մի փոսում տեսնում ենք մի ուրիշ դիակ էլ:

Այսօր մի տունէլից անցանք. լեռը ձեղքել են ու ճամբայ բացել. բանակիտող Բիթլիղից մի ժամով միայն հեռու է: Հանգստանում են Ալի աղայի արօտում, որի ջրափնեայ ուտիները զարթացնում են մեր սիրտը. այստեղ առատ ձձումբի հանքեր կան. սպիտակ խաւերը արդէն նկատւում են հողի երեսին:

Բիթլիղում եղող հայերին դեռ չեն կոտորել. հաւանական է, որ մեզ հէնց զրա համար են բերել: Առաւօտեան շարժւում ենք դէպի Բիթլիղ, որ շատ մօտ է արդէն: Բիթլիղը գտնւում է երկու լեռների մէջտեղ և հոշակաւոր է իր պարտէզներով. շէնքերը ամբողջովին քար ու կիր են: Քանի առաջանում ենք՝ քաղաքների հոյակապութիւնը աւելի և աւելի նւազում է. երբ

Հալէպն էինք տեսել, Մուսուլին չէինք հաւնում, մինչդեռ հիմա Բիթլիղին չենք հաւնում: Շէնքերը շինւած են երկու լեռների փէշերի վրայ, իսկ պարտէզները շքեղացնում են տեսարանը:

Ժողովուրդը մեզ դիմաւորելու համար խոնւել է ճանապարհի վրայ. ժողովրդի տարազն ու ձևերը յիշեցնում են հին դարը. կատարեալ վայրենի մարդիկ են: Հայոց տները աւելի ամուր են: Նրանք ապաստանել են այդ բերդաման տներում և երբէք դուրս չեն գալիս: Գիւղերի հայերը բոլորովին կոտորւել են, իսկ փախչել կրցողները ապաւինել են քաղաք: Մեր անցնելիս նրանք հեռաքրքրութեամբ նայում են պատուհաններից. հաւանաբար մտածում են, թէ սրանք եկել են մեր կեանքը վերջացնելու համար:

Հանգստանում ենք քաղաքի միւս կողմը՝ կէս ժամու հեռաւորութեան վրայ: Բիթլիղը բոլորովին չի կարող իր ուտելիքը արտադրել, որովհետև ոչ մի կանաւոր արտ չկայ, որ ցանեն. ամեն ինչ զրսից են ստանում:

Յաջորդ օրը գնում եմ քաղաք. մարդ ամաչում է Բիթլիղը քաղաք անւանել. ոչ մի ուտելիք չկայ. վաճառող նիւթերը այնպիսի բաներ են, որոնց կարելի է հանդիպել գիւղերում:

Մինչև երեկոյ պտտեցի և չկարողացայ բոլոր կարիքներս հոգալ: Նստայ մի սրճարան, որ կազմել էին ծառերի հովանու տակ: Երբ ասին, որ այստեղ պաղպաղակ է գտնւում՝ զարմացայ. անմիջապէս յիշեցի Պօլիսը և առանց մտածելու, որ պաղպաղակը կարող է ստամոքսս վնասել, բաւական շատ քանակութեամբ կերայ:

Երեկոյեան վերադառնալիս գուլպայ գնեցի մի հայ երեխայից. ապա հարցրի նրան. «Ինչու տներից

դուրս շեն գալիս»։ «Սպանում են» — պատասխանեց տղան։ «Դու էլ ուզում ես սպանուել» — կրկին հարց տւի երեխային։ «Դու այդ բանը ուզում ես, որ ես էլ ուզեմ» — պատասխանեց դուրպայ ծախող երեխան։

Յաջորդ օրն էլ հանգստանում ենք։ Բիթլիզի կուսակալը չափազանց քաղաքագէտ մարդ է, նա հայերին հաւաքելով՝ մի դոյզ գեղեցիկ և պովիլիօնի ձևով դորանոցներ է շինել տւել. այժմ երկուքն էլ լիովին պատրաստ են։ Քաղաքի ամենագեղեցիկ շէնքը Օսմանեան բանկի շէնքն է։ Այսօր սր քաղաքը մտանք, մի պաշտօնական անցք կատարեցինք կուսակալի և մեր հրամանատարի ներկայութեամբ. զինւորները շափազանց լաւ քալեցին. ինչպէս ըէջը շատ հաւանեց։

Երէկ տեսնեցի մի ոստիկանի (փօլիս) հետ. նա սասց, որ «Քաղաքի հայերի թիւը 10,000 է, աները շատ ամուր են, խոյ իրենք մեծից մինչև փոքրը զինւած. սակայն վանեցիների չափ կտրեճ չեն. մինչև հիմա ոչինչ չկարողացանք անել, որովհետև վախցանք, որ Վանի մէջ ցոյց տրւած անխելքութիւնը կարող է կրկնուել»։

Մի ուրիշ ոստիկան էլ սասց. «Այս քաղաքի առանցքը պիտի գտնել և այնտեղ մի ուումբ պայթեցնելով պէտք է օղը հանել. ուրիշ ելք չկայ։ Առ այժմ հաւաքում են դաշնակցականներին և ժողովրդի երեւիներին»։

Այսօր հանգստանում ենք վրանում, բայց հրաման եկաւ, որ պատրաստ լինենք։ Որովհետև հաւանական է, որ վաղը մեկնենք, ուստի երկրորդ անգամ գնում եմ քաղաք՝ մօտս եղած փողերը ուղարկելու համար խեղճ մայրիկին։

Փողերը ուղարկեցի. դարձեալ նստեցի ծառերի տակի սրճարանը և կուշտ-կուշտ պաղպաղակ կերայ.

կեսօրին որպէս թէ պիտի մեկնենք. անմիջապէս գնացի բաղնիք և մի լաւ լողացայ. լաւ բաղնիք էր. ճիշտ մեկնելու պահուն հասայ։

Բաղնիքից դառնալիս տեսայ, որ ժանդարմները հրահանգ էին ստանում. զինապահետի զինւորներն էլ պատրաստ կանգնել են ոստիկանատան առջև. հասկացայ, որ մի բան պիտի կատարել։ Երբ հասայ զինւորներին վայրը, իմացայ, որ մեզ մօտ եղած հայ զինւորներին էլ ուզել են. վաշտի մէջ գտնուածներին առի տարայ։ Միհրանը համբուրեց ձեռքս և սասց. «Յֆէնզի, իրաւունքդ ինձ հալալ արն»։ Նրանց յանձնեցի ամրաշէն գումարտակին. չափազանց ողբերգական մի տեսարան էր. խուզարկում էին նրանց զրպաններն ու ծոցերը և ինչ որ գտնէին՝ վերցնում էին։ Մի քանի հեծեալ ժանդարմներ էլ էին եկել մեզ մօտ. սրանք իբր թէ հայ զինւորներին Բիթլիզ պիտի տանեն, բայց Աղրայիլի պէս սպասում են. գէպի մահ էին գնում հայ զինւորները։ Մեր թամբագործին ուղարկել էի քաղաք. նա դժւար թէ կարողացած լինի իր կեանքը ազատել։ Հայերը իրանց խանութները բաց ձգելով փախչում են։ Ժանդարմները բաց են անում տների զոնները և դուրս հանելով ներս գտնուողներին՝ հաւաքում են մի հրապարակի վրայ։ Հաւաքուածների թիկունքը պահում են ժանդարմներ։ Մարդիկ ոչ մի դիմադրութիւն ցոյց չուին։ Վերջապէս Բիթլիզն էլ մաքրեց։ Մեր կիսաբաժնում երկու հարիւր հայ զինւորներ կային, նրանք էլ մաքրեցին։ Առաջին օրը երբ գնացի Բիթլիզ, կառավարութիւնը յայտարարել էր, որ ամեն մարդ իր խանութը բաց անէ (առաջին օրը, որ ոչինչ չը կարողացայ գտնել՝ պատճառն այն էր, որ հայերի խանութները փակ էին, իսկ առևտուրն ու արհեստը նրանց ձեռքում էր գտնուում)։ այդ յայտա-

րարութեան վրայ խանութները բացեցին և սկսեցինք առևտուր անել: Սեղացի ժողովուրդը, գիտնալով մէկտեղ, որ պիտի մեռնի, այնու ամենայնիւ կանոնաւոր կերպով առևտուր է անում. յոյսի աշխարհ է սա. չէ որ կարող է մտածել, թէ «գուցէ ազատեցի»:

Կուսակալը լաւ կերպով որսում է սրանց, ասելով թէ՛ «Գուցէ կառավարութիւնը ձեզ ներում է. իսկ ես ձեզ 60 տոկոս վատահացնում եմ. եթէ հաւատարիմ մնաք, կազատե՛ք. եկող զինւորներից մի վախենաք, նրանք պատերազմի պիտի երթան»: Այսպէս ասելով՝ զօրանոցները շինել է տել, իսկ յետոյ իսկապէս որ վատահացնում է մարդկանց—բոլորին էլ կոտորում է:

Կէսօրին մեկնում ենք. շրջակայքում բարձրանում են լեռները. իսկ մենք քալում ենք բաց դաշտի միջից. երեկոյեան հասնում ենք Դատւան: Ճանապարհին հանդիպում ենք մի մարդկային զիակի. իսկ անասունների դիակները այնքան շատ են, որոնցից կարելի է հասկանալ, թէ գաղթականները ի՞նչպիսի թըշտութիւնների են ենթարկւել ճանապարհին. նրանք բոլորը լեցել են Բիթլիզ. իսկ այնտեղ ո՛չ իրենց կենդանիների և ո՛չ էլ իրենց համար չեն կարողացել ուտելիք ճարել. մարդիկ այժմ մուրացկանութեամբ են ապրում: Բիթլիզը լաւ ջրից բացի՝ ուրիշ ոչինչ ունի:

Դատւանը գտնւում է Վանի լճի ափին. ուրեմն Վանի լիճն էլ տեսանք. չափազանց գեղեցիկ վայրեր են. լճի վրայ կան միակայմ առադաստանաւեր, ձիշտ նման Պօլսի առազաստանաւերին. բոլոր հայերին կոտորել են հէնց զիւզի մէջ:

Առաւօտ պաշտօն ստացանք գնալու Սորփ, որ գտնւում է լճի հարաւային ափին. ռազմամթերք պիտի հասցնենք այնտեղ գտնւող վաշտին և պիտի մասնակցենք կռիւն: Ճանապարհները չափազանց զարճա-

լի են, իսկ գիւղերը՝ շատ հոգեպարար: Այստեղ ճանապարհը երկուքի է բաժանւում. մէկը գնում է լճի ափից, իսկ միւսը լեռների միջից. երկրորդ ճանապարհի կողքից մի ջուր է հոսում. մենք անցնում ենք մի կամուրջից, որ ձգւած է ջրի ափը գտնւող գիւղերից մէկի մէջ տեղում: Այս կամուրջը բաժանում է վիլայեթների սահմանները. մէկ կողմը Բիթլիզի վիլայեթն է, իսկ միւս կողմը՝ Վանի: Այժմ արդէն Վանի վիլայեթի սահմանումն ենք: Այսօր ութ ժամայ մի ճանապարհ ունենք կտրելու. մի քիչ ճաշելուց յետոյ բաժանւում ենք ջրից և սկսում ենք քալել դէպի լիճը. ճանապարհի քառորդը լճի ափից է գնում. մէջս երբէք ուժ չէ մնացել. ծոնկերս ծալւում են:

Հասնում ենք Սորփ, որ Բէշառիէյի (Կարճկան) կետրոնական զիւզն է. հինգ-վեց ժամ հանգստանում ենք այնտեղ և ես բաւական կազուրւում եմ: Կարճկանի գիւղախումբը երկու կողմից նայում է լճակին և շատ զարճալի դիրք ունի. լեռները բոլորովին անտառապատ են: Կարճկանը գտնւում է Ախլաթի գէմն ու դէմը:

Գիշերանց մեկնում ենք. ես պաշտօն ունեմ մի խումբ զինւորներով դրօշակը տանել նախկին տեղը. վաշտը մեկնում է՝ ինձ վրայ թողնելով խմբի, ինչպէս նաև դրօշակի պատասխանատու գործը: Լուսադէմին վերցնում եմ դրօշակը և տեղաւորում եմ կառավարչատան շէնքի վրայ, իսկ զինւորներին տեղաւորում եմ մի դիրքի մէջ:

Այս երեկոյ հազարապետը ինձ մի ձի է ուղարկելու, որպէսզի դրօշակը յանձնելուց յետոյ մեկնեմ. Մի օր հանգիստ եմ տալիս զինւորներին, իսկ ես ուտելիք եմ վերցնում: Մեր մթերքի փոխադրութիւնը ազանովում են նաւերը: Այստեղ կան 20—30 նաւեր,

որոնցից միայն 5—6 հատն են գործում. մեր ինչքու-
լուցի գինւորներն են բանեցնում նաւերը: Այստեղ
մեր ունեցած ուժերը հետևեալներն են. — Հինգերորդ
շարժուն ուժից մի բառալիօն, պահեստի բառալիօնը
և մեր բառալիօնը. կայ նաև զօրամասի հրամանատար
և մեր հրամանատարը:

Ես տեսնեցի հեռագրատան տեսչի հետ. նա ինձ
յայտնեց, որ «Կարճկանի 86 գիւղերից 11-ը քիւրդա-
բնակ են եղել. իսկ մնացեալները բոլորովին հայա-
բնակ են եղել. կոտորել են բոլոր հայերին, որոնց
մէջ եղել են զէնք բնակու ընդունակ 1600 հոգի: Ա-
մենքը դժգոհ են քրդերից:

Քեասիմ բէյի կիսաբաժինը իբր թէ պիտի գայ
մեր աջակողմը բռնելու. այդ ժամանակ բաւական
շատանալու է մեր թիւը: Մեր 43-րդ գունդը ղինա-
վարժութիւն կատարելիս ենթարկել է թշնամու յար-
ձակման և ունեցել է 4 թնդանօթ և 2 գնդացիք. իսկ
մենք ունեցել ենք 2 հատ պատրուզաւոր թնդանօթ:
Սպասում ենք, որ Քեասիմ բէյը թնդանօթներ բերէ:

Վանի լիճը Մարմարային է նմանում. մենք պի-
տի մնանք այստեղ՝ կռւելու: Այժմ անկախ ենք:

Հինգերորդ շարժուն ուժը մի գումարտակ զօր-
քով ուղեցել է Ախլաթում մի յարձակողական հետա-
խուզութիւն կատարել. երբ անտէլ է, որ այդ ուժը
քիչ է, մի բառալիօն է ուղարկել: Ռուսները սրանց
դէմ հանել են մի գունդ. ունեցել ենք 200 սպանւած,
իսկ բառալիօնի հրամանատարը գերի է ընկել: Ճա-
նապարհին, երբ մենք գալիս էինք, խուճրք գնում էր
Բիթլիկ: Կարճկանում 5—10 կիներ և երեխաներ ցան-
կացել են փախչել, բայց մեր յատուցապահները ետ
են դարձրել նրանց: Դարձեալ հայերն են իմաց տել
թշնամուն՝ մեր ուժի սակաւութիւնը:

Այսօր հանդատանում ենք. Վանի լիճն էլ մտայ-
լուրը աղէ է և ձկնաշատ:

Ընդհարում չկայ. այսօր Բիթլիկից նոր լուր է
ստացւել, որը յայտնում է, թէ դռները կոտրելով՝ բռն-
նութեամբ ներս են մտնում. կիները խենթանում են
եղեր. քաղաքում «դճն, դճն» կայ եղեր. քաղաքը
շրջապատւած է. ոչ ոքի թոյլ չեն տալիս ներս մտնե-
լու: Մեր գնդի հրամանատար Բէշիգ բէյը էլի եկել է.
մեր կիսաբաժնի հրամանատար Իհսան բէյն է, որին
Կէչի Իհսան (այժ իհսան) անունն են տալիս. պատե-
րազմական խորհրդի նախագահ գնդապետը, Բէքիր
էֆէնդին և Ճայեք բէյն էլ են եկել. մեր գունդը դար-
ձեալ շէնցաւ: Թող Աստուած գոհ լինի Բէշիգ բէյից.
քանի նա մեզ մօտ էր, նրա ուժը չէինք գնահատում,
իսկ երբ բացակայեց, այն ժամանակ հասկացանք:
Փառք Աստուծոյ, որ խելօք (?) Ձէլալ բէյից ազատե-
ցինք: Քեասիմ բէյի կիսաբաժինն էլ միացել է մեր
զօրամասին:

Վանի լիճը ոչ մի տարբերութիւն չունի մեր
Մարմարայից, այնքան գեղեցիկ է այս լիճը, որին
ծով են ասում այստեղ, — որ մարդ չի կշտանում զի-
տելուց. չենք կշտանում մանուաւոր մենք, որ միշտ
վարժել ենք ծով տեսնելու: Ասում են, որ երբեմն
ստակալի փոթորիկ է բարձրացնում: Դատուան եկածս
օրը ցանկացայ նաւով ճամբորդել, բայց որովհետև
ըրօշակը հետս էր և ծովն էլ ալեկոծ էր, չկրցայ այս
մտադրութիւնս իրականացնել: Կարճկանը մի գեղեցիկ
նաւահանգիստ ունի, այնպիսի մի նաւահանգիստ, ուր
նաւերը կարող են բոլորովին մօտենալ և ալիքներից
յազատ մնալ: Այս, եթէ մի քանի շոգեխուտեր ունենա-
ինք, ինչքան պիտի օգտւէինք այս լճից. բարեբաղ-
դաբար անազատանաւերով ապահովում ենք միթերք-

ների փոխադրութիւնը, այլապէս սոված պիտի մնա-
յինք:

Առաւօտեան շարժում ենք դէպի Դատւան. լճի
ափին կան շատ գեղեցիկ գիւղեր՝ բերրի հողերով,
առատ ջրերով և մաքուր օդով, բայց ինչ օգուտ, որ
նրանց բնակիչները՝ քիւրդերը՝ 10 փարայչեն արժում:
Նրանք այնքան զգեցի, խայտառակ և ստոր մարդիկ
են, որ գողութեան համար դոհում են իրենց անձը,
լեղապատառ են լինում պատերազմից, ոչ զինուոր են
տալիս և ոչ էլ ուէ գործ կատարում. մնացել են, որ
հանգստութիւնը խոտվին: Մեր կիները սրանցից աւելի
կտրիճ են: Երբ մենք գրօշակն էինք տանում, սրանք
շարեւէ էին ճանապարհի եզրը և լրտեսի պէս դիտում
էին մեզ ու քրդերէնով հարցնում. «Չլինի՞ թէ թշնա-
մին պիտի դայ. մենք վախենում ենք ձեր ետ քաշե-
լուց»: Իսկ ես պատասխանեցի նրանց՝ թէ «Մենք ձեզ
պէս կին չենք, որ փախչենք թշնամու առջևից»:

Հայերը այնքան են սարսափեցրել սրանց, որ չի
կարելի նկարագրել. երբ լսեն թէ հայերը գալիս են,
այն ատեն բաց թող քիւրդին՝ թող փախչի. ամսոս
այդ յաղթանդամ մարմիններին:

Այսօր հայերը իսկապէս ծառայում են ուսական
բանակին. իսկ քիւրդերը հայերի ծառայութեան 1/100-ն
անգամ ցոյց չուին մեր բանակին:

Մի երեկոյ հանգստանում ենք Դատւանում: Ա-
սում են, որ Բէքիր-բէյը Մանազկերտ է մտել: Գի-
շերը քնացայ Ֆայեք-բէյի մօտ, որ շատ քաղցրաբարոյ
մի տղայ է: Առաւօտեան՝ նաւերով պիտի երթայինք,
բայց որովհետև առագաստները կանոնաւոր չէին և
հով էլ չկար, դրա համար չկարողացանք նաւ նստել.
ժամանակը ուշացաւ և դարձեալ ցամաքով շարունա-
կեցինք մեր ճամբան՝ անցնելով Կոտում գիւղի ձորից:

Յաջորդ օրը մինչև երեկոյ քալեցինք և պարտաւորե-
ցանք մի քրդական գիւղում իջնանել:

Ասում են, որ երգրումից դաշտային հրեանի պի-
տի դայ. ասում են նաև, որ աւստրիացիները վերա-
գրաւել են Լէմբէրգը: Պօլսում գտնուած հայերին ասել
են, թէ «Չեզի Գունիայի դաշտերում պիտի բնակեց-
նենք, որովհետև դուք Պօլսի համար կասկածելի էք».
այս ասելով՝ մարդոց նստեցրել են երկաթուղին և տա-
րել ցանել են Գունիայի դաշտերում:

Առաւօտեան մեկնում ենք և երեկոյեան հասնում
ենք կուի վայրը. յաջորդ առաւօտ արդէն որոշ պար-
տականութիւն ենք ստանձնում:

Ես գնացի Բարդուղիմէոս վանքի վաշտի երկրորդ
գումարտակը. տեսնեցի իզմիրցի Ա. յիսնապետ Քեա-
սիմ էֆէնդիի հետ, որի հետ երկու օր պատերազմի
անկեղծ ընկերակցութիւն ենք ունեցել. նա ճանաչում
է մեր հարիւրապետ հանգուցեալ Ալի էֆէնդիին, որ
նահատակեց պատերազմի հէնց առաջին օրը: Աստ-
ւած իբր հողին լուսաւորէ. այդպիսի հարիւրապետ-
ներ հազագիւտ են:

Թշնամին առաջին օրը մեզի շատ նեղեց, բայց
երկրորդ օրը, երբ գունդը հասաւ, դրութիւնը բաւա-
կան շուկեց: Ժիշտ այդ դիշերը Եօթերրորդ գունդը
Ախլաթում Չարդ ու փշուր եղաւ և մենք էլ պարտա-
ւորւած ենք նահանջել: Մենք նշանակեցինք վերջապահ:
Գիշերը ես կորսնցուցի իմ խմբի կէսից աւելին. գի-
շերը լուսացաւ, բարձրացանք լեռները և մինչև կէսօր
կապ հաստատեցինք. մերինները հասան: Մի նեղ
անցքում դիքքեր պիտի բռնենք:

Մի օր հանգիստ. գիշերը քնում ենք ընկուզենաւ

տակ: Իարձեալ մի օր հանգիստ. մի անհասկանալի անգործութիւն է, որ շարունակուում է:

Նահատակւած Նիաղի բէյի կահ-կարասիքն անուրդի հանեցինք. չնայելով որ կարևոր մի բան չունէր, բայց էլի բաւական փող գոյացաւ: Խեղճի գրպանից բոլորովին անյուշաւի կերպով 29 օսմ. լիբա փող գօլբու եկաւ. մարդուն առաջ էլ տուգանքի էին հնթարկել: Ո՛վ դու պարգասիրտ հերոս. մարմնացանձ պատիւ, թող Աստուած ողորմի քեզ: Ամեն անգամ, որ նրա ձին խրինջում է, յիշում եմ հարիւրապետիս. ինչպէս որ Իսմայիլ Հազգիի պէս հաղարապետ չի ճարուում, այնպէս էլ Նիաղի բէյի պէս հարիւրապետ դժւար է ճարել:

Սիրելի հարիւրապետս! ներքը ինձ. քո մասին ես սխալ կարծիք եմ ունեցել. բայց արդէն վերջացել է: Հաւանական է, որ քեզ նեղացրել եմ, ներքը ինձ. ես կարծում էի, որ ինձ նախամեծար չէիր համարում Սաղիից. Սալիլ էֆէնդին էլ յայտնեց, որ իբր թէ ինձ Սաղիից նախամեծար չէիր համարում: Շնորհակալ եմ. բայց ինչ օգուտ, որ կենդանութեանդ ատեն չկրցայ ներողութիւն խնդրելիմ պակասութեանս համար:

Երեկոյեան նշանակուում ենք պահապան՝ հրետանիների համար. մի օր այդպէս ենք անցկացնում. երկրորդ երեկոյ առաջաւոր պահակ ենք դառնում: Յաջորդ օրն էլ հասնում է 36-րդ կիսաբաժինը և պէտք է հանգստանան. մենք պիտի փոխարինենք նրանց գործը: Խեղճերը դեռ երբէք կուի մէջ չեն մտել: Զէնքերը մեծ չափի մատուէր են (10 կրականոց երկփող հրացան), թնդանօթները հասարակ լեռնային պատրուկաւոր թնդանօթներ, գունդերը երկ-երկու վաշտից բաղ-

կացած. ամբողջ-ամբողջ 6000 հոգուց բաղկացած մի կիսաբաժին (գիվիգիա). ահա սա է եղել այն կիսաբաժինը, որին օրերով սպասում էինք: Ինչ որ է:

Երեկոյեան վերադառնում ենք Դաուան. մի դիշեր մտում ենք Դաուանում. առաւօտեան էլի շարժում ենք: Լճի արեւմտեան կողմը երևում է ձիւնապատ Սիփան լեռը, իսկ Դաուանի արեւմտեան կողմը Նեմրուս լեռն է, որը այնքան էլ ձիւնով ծածկւած չէ: Ճանապարհին մի կաթիլ ջուր չի ճարուում: Նեմրուս (Նեբրովը) լեռան փէշերը ամբողջովին հանքային հողեր են. սև-սև և փայլուն քարի կտորները տեսնելով ես հնթադրեցի, որ հանքածուխ պիտի լինեն. թողած է երեսի վրայ: Լեռնից ձիւն ենք բերել տալիս և ջրի փոխարէն ուտում ենք. երեկոյեան հանգստանում ենք Թեղուտում՝ գիւղիցիայի կայանում:

Թշնամին կանոնաւոր կերպով նկատում է մեր բանակատեղին, որովհետև բաց տեղ ենք: Ախլաթ գիւղաքաղաքը բաժանման գիծ է կազմում մեր և թշնամու միջև: Ախլաթի հարաւակողմը գտնուող երկու բլուրներից սկսած մինչև ձախակողմը գտնուող Նազուկ լիճը գտնուում է մեր շրջիկ ուժի հսկողութեան տակ, հինգերորդ շրջիկ ուժն էլ Նազուկ լճի արեւմտեան ափից մինչև Մուրադի հովիտը. 36-րդ զխիզիան էլ բռնել է կարճկանի հարաւային բլուրները:

Երկու օր շարունակաբար հանգստանում ենք:

Եկաւ մեր գնդի հրամանատարը՝ մի վաշտով. մեր վաշտի հրամանատարը նեղացել է մեզանից, դրա համար մեր գոյքերը բերել չի տալիս: Լեռքեցի վաշտի թիկնապահութեան պաշածուր. թիկնածուները թիկնապահութիւն են անելու, իսկ մենք որպէս թէ երկրորդ

յիսնապետ պիտի լինենք: Այսօր դարձեալ հանգստանում երբ. Սալիլ բէյը եկաւ. մի յատուկ վաշտով դիմաւորեցինք նրան. միւլգիլը նւագեց յաղթութեան մարշը:

Այսօր դարձեալ հանգստացանք. Բէքիր էֆէնդին եկաւ և տեսնեցինք. այս գիշեր երազումս տեսայ Պօլսի կեանքից չդիտեմ ինչեր... մաքրելու կարիք զգացի, ուստի գիւղի մի տան մէջ շուր տաքացնել տւի ու լողացայ:

Լուրեր են պտտում, թէ Ռուսիան անջատ հաշտութիւն կնքել է ցանկանում. ուր էր, թէ տեսնէինք այդ օրերը: Երեկոյեան գտնուում եմ պարենաւորիչ մարմնի վրանում. ահա այն կիթառը, որի վրայ նւագում էր մեր Բահրին. ախ, այդ օրերը անցան մեզնից. մենք այլևս քալում ենք դէպի յաւիտենականութիւն. ուր են այդ երջանիկ օրերը. գնացին, աներևոյթացան բոլորը...

Բէքիր էֆէնդին պաշտօնապէս եկել էր վաշտի մէջ. այսօր շուտ վեր կացանք, մարզանք կատարեցինք և բոլոր վրանները պտտեցինք: Յանկարծ թընդանօթի ձայներ լսեցին. մենք էլ շարժեցինք իբր պահեստի ուժ, նստեցինք մի բաց դաշտում. թնդանօթաձիգները սկսեցին կրակել: Եթէ այսպէս բաց դաշտում մնանք,— մտածում եմ ես,— թշնամին մեզ պիտի որսայ: Արգէն քիչ մնաց, որ մեզ բոլորովին փճացնէր: Ետ քաշեցինք և սկսեցինք քալել դէպի ձախ: Իմացանք, որ թշնամին ձեռնարկում է շրջապատել մեր Ծրբ շրջիկ ուժը. կազմած ճակատը ոչ ի՛նչ դիւրեգիայի, այլ կտրպուտի ճակատ է: Աստուած իմ, երանի թէ մեզի քար ստեղծած լինէիր, որ այս օրերը չտեսնէինք:

բայց ներքը տէր, մեղանշում եմ: Միշտ կուում ենք թշառ դրութեամբ. թշնամին ունի գաշտային հրեւտանի, Ծ—Յ գունդ ձիււորներ, իոկ մենք ոչ գաշտային թնդանօթ ունենք և ոչ էլ մեծ քանակութեամբ հեծեալ զօրքեր: Երկու դիւրեգիաների արանքը պահպանում ենք ըմդամենը 150 հոգինոց մի գումարտակով. ահա այս է պատճառը, որ թշնամին մեզ ճնշում է: Հասկացուեց որ թշնամին չի յաջողել շրջապատել Ծրբ շրջիկ ուժը:

Ասենք մի գիշեր հանգստացանք, բայց այդ հանգիստը քիթ ու բերաններիցս վար եկաւ. կէս գիշերին շարժեցինք և քալեցինք մինչև առաւօտ. ընդամենը երկու ժամ քնացանք և ահա յարձակողականի ենք անցնում:

Չափազանց գեղեցիկ մի յարձակում գործեցինք, իսկ կէս գիշերին դարձեալ ետ քաշեցինք. մենք գրտնուում էինք Նագուկ և Սաչլու լճերի մէջտեղ, ուր պէտք եղած դիրքերը դրաւեցինք: Հողիւ մի ժամ քնացայ և ահա դարձեալ թնդանօթի ձայներ սկսեցին լսել:

Սև գործ.—Մեր աջ թևը կարճկանի հարաւային բլուրներից քաշել է դէպի Դատուան. ուրեմն մենք դէպի արևմուտք պիտի նահանջենք:

Գալում ենք Նագուկ լճի արևմտեան ուղղութեամբ և իբրև պահեստի ուժ ենք գնում մեր գնդի համար: Ահա դրութիւնը փոխուում է հիմա:

Երէկան մեր կատարած յարձակումը իսկապէս որ մի օրինակելի մասեովը էր. զինւորը ոտքի վրայ կրակում էր, բայց ի՞նչ օգուտ, որ ենթարկեցինք գնդացիների կրակին: Ես սկսեցի վկայութեան հատուած

կարգով*)։ Ձախ կողքիս սպանուցի գրամցի Հիւսէյնը
և ընկաւ ճիշտ ստրերիս տալև, իսկ ինձ ոչինչ չեղաւ։
Աստուած սպասուց, երեի նա ցանկապատ, որ տակաւին
սպրեմ։

Այսօր մինչև երեկոյ քալեցինք և երեկոյեան հա-
սանք այնտեղ, որտեղից մեկնել էինք կէս գիշերին։
Լուսարացին հասաւ սև լուր։ Դատուանը պարպւել է
և մենք պիտի գանք աղանձովելու 7-րդ գնդի թիկուն-
քը։ Բայց ճանապարհին լուր ենք ստանում, թէ «եա
դարձէք, նահանջում ենք»։ այս կերպով մենք օրը ցե-
րեկով մնացինք բաց դաշտում։ վերջապէս կացութիւ-
նը պարզւեց. մենք սխալմամբ թողել էինք մեր զիր-
քերը։ Մեր Մազբէտը իր 2000 պահեստի ուժերով հա-
սել էր արդէն Դատուան, իսկ այնտեղ եղողները սխալ-
մամբ այրել էին մթերքի պահեստները, որով մեր ու-
տելիքները փճացրել էին։

Մենք դարձեալ նշանակեցինք իրրե պահեստի
ուժ 9-րդ գնդի համար. հանգստացանք մինչև երեկոյ,
երբ յայտնեցին, որ Դատուան պիտի երթանք. ճն ու-
րեմն։ Աստուած, զի սպանովութիւն տուր։

Հասանք Դատուանի հարաւարեմտեան բլուրները
և մի գիշեր հանգստացանք, աստուած դուրսութիւնը էլի
խաղաղ գնաց։ Այգտեղ լսեցինք, որ Ջէլալ բէյը հրա-

*) Վկայութեան հատուածը Դարբանի «Էա իլան իլ
ալլան, Մէհմետ բէտուլ ալլան» խօսքն է, որ ամբողջ
հաւատոյ հանգանակն է մահանկալանի, որով նա
վկայում և խոստովանում է, թէ — «չկայ Աստուած, բացի
միակ Աստուծոց և Մուհամէդը նրա ստրեախն է»։
Այս հանգանակը կրկնում են և մահամերձները։ Ծ. Թ.

ցանազարկ է եղել, որովհետև լքել է մեր թողած բը-
լուրները. մեր երկրորդ վաշտի երկու զինւորներին էլ
հրացանազարկ են արել, որովհետև փորձել են փախ-
չել։ Գնդապետը յիշեալ երկու զինւորներին հանել է
տակ մի բլրի վրայ, յետոյ աչքերը կապել սալով
կանգնացրել է կուրի ճակատի դէմն ու դէմը։ Սազէդ-
տին էֆէնդին էլ շորս տասնեակ զինւորների հրամա-
յել է համազարկ տալ. Կեցցեն գնդակահարողները,
յիլ է համազարկ տալ. Կեցցեն գնդակահարողները,
որոնք մեռնելու բողէին իսկ պահել են իրանց պողա-
րիւնութիւնը և տոկունութիւնը. մի միտով սառնա-
սրտութեամբ սպասել են մահւան. համազարկը տրե-
լուն պէս դիտապաստ ընկել են՝ բաղամթիւ վէրքեր
ստանալով. մի ողբերգական տեսարան է պարզւել։

Իսկ Ջէլալ բէյը իր զիրքը լքելով եկել է
դիւրիդիայի հրամանատարի մօտ. հրամանատարը հրա-
մայել է անմիջապէս իր տեղը վերադառնալ, իսկ Ջէ-
լալ բէյը ճանապարհին էլի նստել է ու չի ցանկացել
երթալ։ Հրամանատարը այս բանը իմանալուն պէս
զինւորներին դառնալով ասել է. «Բուք պատիւ չու-
նէք, ինչո՞ւ փախաք»։ Չինւորները պատասխանել են,
թէ հազարապետի հրամանի համաձայն փախել են։
Այս խօսքի վրայ հրամանատարը իր թիկնապահներին
հրամայել է գնդակահարել Ջէլալ բէյին. հրամանը
իսկոյն կատարւել է։

Մեր երրորդ վաշտը թէև դարձեալ գրաւել է իր
դիրքերը, բայց այս անգամ էլ 5-րդ շարժուն ուժն է
նահանջում։ Գիշերը հանգստանալիս մի հեռագիր ենք
ստանում, որ ասում է. «5-րդ շարժուն ուժը ետ է քա-
ւել, դու էլ քաշիր»։ Մեր ձախ թիւր վտանգում է.
եթէ եա քաշենք, մեր ճակատը պիտի լայնանայ,

ուստի մի օր էլ ենք սպասում. երեկոյեան կողմը երկրորդ հրաման ենք ստանում՝ քաշելու դէպի Բաղչայ քէօյը: Հարիւրապետ Բաքիր էֆէնդին ծանր հիւանդ է, ուստի ես եմ ստանձնում գումարտակի հրամանատարութիւնը:

Գիշերը մի քանի ժամ քաշելուց յետոյ ճամբուն կորցրինք և ընկանք անտառների մէջ. լուսարացին գարձեալ սկսեցինք քաշել. երեկոյեան, երբ քիչ էր մնացել որ Բաղչայ քէօյը հասնէինք, տեսանք որ ուս ձիւտորները փախչում էին. մենք անմիջապէս զիբքեր գրաւեցինք. շարժուն ուժը չկար. նրա տեղ հովերն էին փչում: Գիշերը վրայ հասաւ. բարեբաղդարար թշնամին մեզ չը հետապնդեց, որովհետև ոչ կապ ունէինք զօրամասերի հետ և ոչ սաղմամթերք. հետևաբար բոլորս էլ պիտի կոտորէինք: Դէպի հարաւարեւմուտք սկսեցինք քաշել՝ Կութի ուղղութեամբ: Արագ կերպով անցանք մի ջրից և հասանք մի գիւղ ուր երեք հայ սպանւածների հանդիպեցինք՝ մի տղամարդ, մի կին և մի երեխայ: Տղամարդը գրկել էր իր երեխային, որի բերնից արիւն էր հոսել:

Անցնում ենք Մուշի դաշտի ջրառատ ձորերից. անհամար դիակներ ընկել են հոս ու հոն. մի տեղ պեսայ, որ դիակները ոչխարի հօտի պէս խիտ-խիտ փուկ էին գետնի վրայ. մի զղբելի գարշահոտութիւն բռնել էր մթնոլորտը. ձորերը անհամար դիակներով լիքն էին: Շատ տարօրինակ էին ցերեկւայ տեսածները. ոմանք ոչխարի պէս գլուխը դէպի կտ գարձարձ՝ ամեն ձեռով ընկել էին բոլորովին մերկ մարմնով, որոնք սկսեցել էին արևի տակ:

Մեր գնդապետը հարբել ու գլուխը տաքացրել է,

առում է, թէ Կութ պիտի երթամ: Մենք մի անգամ գերութիւնից ազատեցինք, այժմ երկրորդ անգամ պիտի գերի ընկնենք: Լնչ որ է. մեր զօրամասը մեր ձախ կողմումն է և մեղնից առաջ է դնում. ես գումարտակի փոխ-հրամանատարն եմ:

Վերջապէս միացանք մեր զօրամասին. մեր երրորդ վաշտից մնացել է միայն երկու գումարտակ: Հիմա հասկացանք, որ մեր նահանջի պատճառը եղել է այն, որ 5-րդ շարժուն ուժի մի խումբը ենթարկւել է թշնամու մի հեծեալ գումարտակի յարձակման: Հինգերորդ շարժուն ուժից 2000 հոգի գերի և կորուստ կայ, իսկ մեր երրորդ վաշտից վերաւորել և սպանւել են 9—10 սպայ: Այս նահանջով Մուշի դաշտն էլ թողնում ենք թշնամուն:

Մուշի դաշտում նախապէս եղել են 600 գիւղեր, ամեն մէկը 2—300 տնով և բոլորն էլ հայ բնակչութեամբ լիցուն. սրանցից սպանւողները արդէն սպանւել են, իսկ փախչողները ապաստանել են ձիւնոտ լեռներում: Այսօր քեռ ձիւնէյն փաշան սպանել է 40—50 հայերի, որոնք կրակ էին բաց անում մեր վրայ: Էշրէֆի հրոսախումբն էլ (չէթա) մեծ զոհարեութիւն ցոյց տւեց, այնպէս որ Ախլաթը դիակներով ծածկւած թողնում ենք թշնամուն:

Շարժուն ուժը դէպի կտ քաշելուն պէս՝ թշնամիները գրաւել են նրա բոլոր դիրքերը: Այսօր հանգստացանք. գումարտակի հրամանատարի հանգամանքով այսօր ոչ մի գործի չգացի. երեկոյեան պիտի մեկնենք: Զիբը պարենաւորման գործի նախագահին յանձնած լինելուս պատճառով պարտաւորեցինք մինչև առաւօտ սպասել:

Հազիւ թէ շարժուել ենք, անհ հասնում է մի գրութիւն, որ հրամայում է պահել մեր զիրքերը. մի քիչ անց՝ գալիս է մի ուրիշ գրութիւն, որ հրամայում է մեկնել: Այս անգամ մեկնում ենք և գալիս ենք մեր բուն զիրքերը: Մենք այս ըոպէին մի պաշարած բերդի ենք նմանում. թշնամին բռնել է մեր առջևը, ետևը և աջակողմը, իսկ մենք մի օր դեռ հանգստանում ենք:

Ուրախալի լուր.— Վանի զօրաբանակին պատկանող 17-րդ և 28-րդ զիւղիանները զնդապետ ֆէրիմ բէյի հրամանատարութեամբ եկել են (ընդամենը ութ բատալիօն). ութ բատալիօնը ունի ընդամենը 1 և կէս բատարէա (6 թնդանօթ), իսկ Վանի զօրաբանակի զիւղիանները ունեն երկուական բատարէա արագահարած թնդանօթներ. կութում կայ, երկրորդ հեծեալ գնդից բացի, նաև ութ բատալիօն: Վաղը պիտի յարձակեն Մանազկերտի վրայ, իսկ մենք շարժուելու ենք դէպի լճերը:

Եկաւ գումարտակի հրամանատարը. Գ. գումարտակի հրամանատար Սաադէդտին էֆէնդին ոչ կարող է մի տեղեկագիր գրել և ոչ էլ կարող է գումարտակը վարել. անցեալ օր չկարողացաւ մի խումբ անգամ առաջացնել մեր աջ կողքից. ու հիմա այս մարդը գումարտակ պիտի ղեկավարէ. թող Աստուած օգտտէ նրա գումարտակը: Եթէ մենակ մնացած լինէի, աւելի լաւ էր. զղւելին մէկն է. Աստուած իմ, ինչպիսի մարդկանց ձեռք ընկանք. փորձանք ընկանք այս յիմարի ձեռքը:

Առաւօտեան շարժում ենք դէպի լճերը և ամբողջ օրը քալում ենք առանց թշնամու հետ շփում ունենալու: Նահանջել միշտ գոյութիւն ունեցել է մեր

զիւղիայի համար. այժմ էլ այնպէս ենք փախչում, որ երեկոյեան հասնում ենք Նազուկ լիճը. մեր աջ կողմը բաց է, ուստի անմիջապէս կորագորութիւն ենք ստանում զիրքեր պահելու համար:

Արաբները դարձեալ նահանջել են. Ձիա բէյը պաշտօնանկ է եղել, նրա տեղը անցել է Քեասէմ բէյը՝ իբրև զիւղիայի հրամանատար:

Այժմ զրութիւնը այսպէս է. 17-րդ և 28-րդ զիւղիանները, 5-րդ և առաջին շարժուն ուժերը, 36-րդ զիւղիան, 8 բատալիօնից կազմած մի ուրիշ զիւղիա, մէկ հեծեալ զինուորների զիւղիա, երկու հեծեալ գունդ պատրաստ են: Եթէ Աստուած յաջողէ և Մանազկերտը ընկնի, թշնամին բնականաբար պիտի նահանջէ: Մի անգամ եթէ յաջողենք հասնել հին սահմանին, դա արդէն բաւական է: Մենք գտնուում ենք կուրբի բլրի արևմտեան կողմը. մեր ձախ կողմը գտնուում է Բիլիհան (?) լեռը. զիշերով յառաջացանք մինչև առաջաւոր զիրքերը, իսկ առաւօտ սկսեցինք հարձակել: Մեր գումարտակը դասաւորւել է իբր պահեստի ուժ: Մեր յարձակման ենթակայ եղող բլուրներից յառաջանում է 44-րդ գունդը, որը յառաջադասման ընթացքին գրաւել է անհամար ետիօնելիներ, երկարափող կօշիկներ և այլն: Ռուսները նահանջել են՝ նախապէս այցելելով իրանց բանակատեղը: Կարակաշի բլուրներից առաջանում է 7-րդ գունդը, իսկ Սիվրի-թէփէից՝ 9-րդ գունդը: 5-րդ շարժուն ուժը գրաւել է Կըլըլ կէտիւկը, Սուլթան կէտիւկը և Ալաշկերտը, իսկ ուսները նահանջում են դէպի Պարսկաստան: Աստուած իմ, դու պատեհութիւն տուր, որ այս

հայերի մայրաքաղաքը գլխներին անցկացնենք*):

Գերի բռնած մի ուսու սպայ հարցնում է, թէ «ինչն է յարձակում գործեցիք». իսկ երբ մենք պատասխանում ենք, թէ «որովհետեւ ուժ առանք», այդ ժամանակ նա աւելացնում է. «ուրեմն ուսուների բանը պրծաւ»: Գերիներն էլ հաստատում են Վարչաւայի անկումը:

Առաւօտեան շարժում ենք. մերոնք արդէն երեկեանից բռնել են կարակաշի բլուրները. մեր աջակողմը գտնւող Միվրի-Թէփէն էլ գրաւել է. սա այնքան մի կարևոր բլուր է, որ չի կարելի ասել. թշնամին այդ բլուրի վրայից դիտելիս է եղել մեր ամբողջ շարժումները:

Այսօր 6—7 ժամ անընդհատ քալեցինք. թշնամին գիշերով նահանջած լինելով, մենք առանց կուրի գրաւեցինք Եօղուրդ-Քէմէյ բլուրները: Մեր ձախ կողքին կուում են 5-րդ շարժուն ուժը և 17-րդ դիւիզիան:

Մանաղկերտի կամ Բուլանըիի դաշտում թշնամին մինչև երեկոյ գիմադրում էր, որովհետեւ թնդանօթի ձայները անվերջ կերպով լսում էին: Վերջապէս նա պարտաւորեց քանգել քաղաքի հիւսիսակողմը գտնւող իր բանակատեղին. մինչև իրիկւայ ժամի 8-ը դեռ լսում էին թնդանօթի ձայներ, իսկ նրանից յետոյ միայն հրացանների ձայներ:

Մեր գումարտակը գտնւում էր Միփան լեռնից

*) Ակնարկում է Վանը, ուր այդ ժամանակ հայերը տեղական իշխանութիւն էին հաստատել:

5—10 քիլոմէտր գէպի ձախակողմ. լուր ստացեց, որ Միփանի արևմտեան լանջերում պահւած է թշնամու մի հեծեալ զունդ, ուստի Ա. հարիւրապետը և իր թիկնապահը պաշտօն ստացան թշնամին քշելու յիշեալ լանջերից. մենք քիչ հեռու լինելու պատճառով ուշ հասանք. մինչև առաւօտ սրտատրոփ սպասեցինք, յետոյ ես գնացի վերոյիշեալ բլուրները պատեցի, տեսայ որ ոչ ոք չկայ: Փառք քեզ Աստուած, միթէ՞ այսպիսի օրեր էլ պիտի ցոյց տայիր մեզ: Դու միշտ ցոյց տուր մեզ այսպիսի օրեր, երբ թշնամուն քշում ենք մեր սուրբ հողից:

Թող Աստուած ազգին բաշխէ մեր դիւիզիայի հրամանատարին՝ Ինսան բէյին. մեր հրամանատարները՝ Մալիլ բէյը, Աբդիւլ Քէրիմ բէյը, բոլորն էլ աննման հրամանատարներ են: Մեր դիւիզիայի հրամանատարը քօպէապէս որոշում է տալիս. «ուրք պիտի օգնէք ձեր ձախակողմը գտնւող դիւիզիային», թշնամին պիտի քշէք, մարշ, յառաջ» ասելուն պէս՝ մէկ էլ տեսնես զինւորները շարժեցին:

Այս անգամ թշնամին այնքան խուճապով է փախել, որ թողել է իր դաշտային հիւանդանոցի վրանները. մերոնք գրաւեցին այդ վրանները: Այս առաւօտ թշնամին փախաւ Մանաղկերտից, իսկ մերոնք մտան քաղաք: Թշնամու վերջապահները շարունակում են կաւով նահանջել:

Այսօր ես կուրի բռնեցի հայերից կազմւած մի թշնամի հեծեալ խմբի հետ, որ երբէք դիմադրութիւն չդրոյ չաւեց. երևի մարդիկ եկել էին իրանց գաղթականներին տանելու. երեկ երեկոյ մեր ձախ կողմ գրաււող գիւղից քաշել էին իրանց գաղթականներին և

Քողել էին Սիփանի սասորտում, այսօր էլ եկել էին
 այնտեղից վերցնելու: Ես վերադարձայ, որովհետև ինձ
 հրամայած էր ետ դառնալ. այս կերպով երեկ և այ-
 սօր երկու մեծ պատեհութիւններ կորցրած եղանք, ո-
 րովհետև՝ նախ ես պարտաւոր էի ետ դառնալ և երկ-
 րորդ՝ մեր գումարտակի երկու քիլօմէտր ետ գտնելը
 ինձ հնարաւորութիւն չաւեց մի փոքր յարձակում գոր-
 ծելու: Առաջին ընդհարումը սկսելուն պէս ես տեղե-
 կագիր ուղարկեցի թիկունքը և գումարտակը հասցնե-
 լու պէտքը շեշտեցի. բայց ինչ օգուտ: Կեցցէն մար-
 դիկ և երևում է, որ եթէ մենք այստեղ մենակ մեռնե-
 լու էլ լինենք, էլի չը պիտի գան մեզի օգնութեան.
 օրպէս թէ մենք այս բանակի մի մասնիկը չենք կազ-
 մում. երևում է, թէ հարիւրապետը իր խնայթութեան
 պատճառով չհամարձակեց գումարտակին ուղարկել: Եւ
 ես յանդգնութեան մասին էլ է խօսում: Այս աշխար-
 հը ահա այսպէս է:

Կէսօրից վերջ, վերադառնալով, այսօր դարձեալ
 իբրև պահեստի հանգստանում ենք: Մեր բատալիօնն
 էլ է առաջացել, իսկ Մանազկերտը արդէն երէկւանից
 վերցւել է. այսօր մերոնք հետապնդում են թշնամուն:
 Մենք գերի ենք վերցրել երեք սպայ, (որոնցից մէկը
 հարիւրապետ է) և 229 զինուոր. ասում են, որ երկու
 հատ դաշտային թնգանօթ էլ ենք վերցրել: Այսօր թըշ-
 նամու հետ չենք շփում. նա Մանազկերտից հեռացել
 է 5—6 ժամայ տեղ. մերոնք էլ նոյն չափով յառա-
 ջացել են: Մանազկերտում գրաւել ենք նաև առաւ-
 կենսամթերք:

Այսօրւայ հայ ձիաւորները զինուորական տարա-
 զով հագնւած էին. երևում է, որ նրանք իրանց ընտա-

նիքների հոգան էին քաշում, դրա համար էլ բաժանւած
 էին իրանց զօրամասերից:

Բռնւած գերիները գանգատում են անօթութիւ-
 նից, որպէս թէ 5—6 օրից ի վեր սոված են: Հազար
 փառք քեզ, Աստուած իմ, որ այս օրերին էլ արժանաց-
 ըրի մեզ:

Գնում եմ գերիներին տեսնելու. երկու-երկու
 շարւելով մի օղակ են կազմել և դիտում են իրանց
 շուրջը. այնքան են ձանձրացել խեղճ մարդիկ, սր
 համարեա թէ գոհ են իրանց գերի ընկնելու համար:
 Նրանք տեսան մեր միւզիկը, ուրախացան և սկսեցին
 խաղալ ու ծիծաղել, երբ միւզիկը սկսեց նւագել: Նրան-
 ցից մէկը բարևեց ինձ. ես անմիջապէս պատասխանե-
 ցի: Ամենքը հետաքրքրութեամբ նայում էին ինձ. Ու-
 ղիղն ասած, այդ ըովէին սրտիս մէջ ուէ քէն չմնաց,
 որովհետև բոլորն էլ խեղճ էին, բոլորն էլ զգած՝ պա-
 տերազմի շարիքներից. ցաւեցի իրանց վիճակի հա-
 մար. նրանք իրանց գլխարկներովն անգամ խորթ չէին
 դալիս ինձի. շատ սիրեցի նրանց, որովհետև թըշ-
 ւառ էին:

Մի գիշեր Դէմեան ասած զիւղի արևելեան հա-
 բաւային կողմը հանգստանալուց յետոյ, առաւօտեան
 մեկնում ենք: Ճանապարհին լսում ենք Բէքիր էֆէն-
 դիի մահը և Սալիլ էֆէնդիի նշանակելը իբրև երկ-
 րորդ բատալիօնի հրամանատար: Ծատ անքարեյոյս մի
 գումարտակ է Բէքիր էֆէնդու գումարտակը, որի հը-
 բամանատարները շուտ-շուտ մեռնում են: Իսկ Սալիլ
 էֆէնդին թէև վերջերս ուզում էր գումարտակի հրա-
 մանատարութեան գիրքումը. երևալ, բայց Աստուած
 այդ բանը չընդունեց. մինչդեռ երէկ միևնոյն գումար-

տակում հաւասար ընկերներ էինք. այսօրնա, իր դիրքից օգտուելով, պառուհաս զարձաւ մեր գլխին: Սա դեռ հերիք չէ, ինձ «վախկոտ» էր անւանում, մինչդեռ, հրք ես կուի բռնուեցի, նա օգնութեան չկաւ. ինչ որ է. ես մոռանում և ներում եմ նրան:

Լուսաբացին մեկնելով երեկոյեան հասանք Միփան լեռան հիւսիս-արևմտեան լանջքերին: Երեկայ կուին մասնակցել էին նաև մերինները, չնայելով որ առանձին հրահանգ չէին ստացել. կուրը յաջողութեամբ վերջացել էր: Գործունէութիւն ցոյց տուող եղել է միայն մեր դիւիզիան. այնպէս որ, երբ նա 5-րդ շարժուն ուժի ճակատում կուել էր միայն չորս գնդով, միւս դիւիզիաները իրենց հանգստութիւնն անգամ չեն խանդարել. կարծես մերինները միևնոյն բանակի մասը չէին կազմում:

Ութ բառալիծն ուղարկւել էր Կըլըջ-կէտիւկը բռնելու. եթէ յաջողէին բռնել, թշնամին պիտի քաշւէր դէպի հիւսիս, որովհետև երբ որ մերոնք կողքից կրակի բռնէին թշնամուն, նա այլևս չէր կարողանայ դիմադրել: Գնդացիները մի քանի անգամ կրակել են և թշնամին մտադրւել է յանձնուել, բայց մեր վախկոտները անվերջ կերպով կրակել են. իսկ յետոյ մըտածելով թէ կարող են կոտորւել, թողել փախել են. մինչդեռ, եթէ միւս դիւիզիաներն էլ մասնակցէին կուին, թշնամու ամբողջ ուժը գերի պիտի ընկնէր մեր ձեռքը:

Միփանի լանջքերից մեկնելով մինչև երեկոյ քալեցինք, իսկ երեկոյ պաշտօն առինք գրաւել Պատնոցը: Դումարտակի հրամանատարը ես եմ, առանց ինձ հետ ուրիշ սպայ ունենալու Յոյսս Աստուծոյ վրայ դնելով

ճամբայ ընկանք. մեր ձախ կողմից առաջանում էր 5-րդ շարժուն ուժը: Քալեցինք մինչև երեկոյ և սպա ամբողջ դիշերը: Վերջապէս հասանք Պատնոց, որ մի շատ դեղեցիկ աղօթատեղի ունի: Այստեղ եղել է և կառավարչատուն և դպրոց և ամեն ինչ. բայց սրիկաները այրել են. միայն հայերի տներն են, որ կանգուն են մնացել: Պատնոցը քեռ Հիւաէին փաշայի բընակավայրն է. մէջըտը, դպրոցը և ամեն ինչ ինքն է շինել: Մի գիշեր հանգստանում ենք Պատնոցում:

Ասում են, որ Արճէլում կան թշնամու երկու հետեակ գունդեր, ուստի չնայելով որ երէկ անգին ճանապարհ ենք կտրել ու անցել, այնուամենայնիւ պարտաւոր ենք դարձնալ քալել: Ասուած իմ, դու օգնիր մեզ:

Առաւօտեան մեկնում ենք դէպի Արճէլ. մեր երեկոյեան իջևանը Քաղթաքեարի(?) անուն գիւղն է: Բարդենիներով շրջապատւած այս գիւղի հիւսիսային բլուրների վրայ մի գիշեր հանգստանալուց յետոյ, առաւօտեան դարձնալ ճամբայ ելանք: Նախ քալեցինք դէպի արևելք, բայց յետոյ դարձանք դէպի հիւսիս և շարժանց յոգնեցինք. անցանք երեք Զրերից և հասանք մեր անցած գիւղի հիւսիսային բլուրները, որը մեր իջևանը պիտի լինէր: Թշնամին բռնել էր Հանօ, Համօ և Կըլըջ-կէտիւկը: Մենք յարձակման անցանք նախ Մօլլարբա գիւղից:

Մի օր հանգստանում ենք Բլէջան գիւղում, որի առջևից մի ջուր է անցնում. դարձնալ դումարտակի հրամանատարութեան պատասխանատուութիւնը իմ վրաս է. 5-րդ շարժուն ուժից Նազիֆ էֆէնդին պատմում է, որ մեր կրկու դիւիզիաները գերի են

բանել ընդամենը 1500 հոգու: Թշնամին որոշել էր Քաղթաքեարի առջևի բլուրներում գիմադրել, ուստի դիրքեր էր պատրաստել, բայց տեսնելով որ 5-րդ շարժուն ուժը իր կողքից առաջանում է, թողել փախել էր: Ասում են, որ այժմ կըլլջ-կէտիւկն էլ մեր ձեռքումն է գտնուում: Վարչաւայի անկումը հաղորդել է նաև Օսմ. հեռագրական գործակալութիւնը, որի հեռագիրը յայտարարել է Մուշում:

Յօթերրորդ գնդից մի զինուոր սպանել է իր սպային. ուրիշ մի զինուոր էլ (տասնապետ է եղել) այս բանը տեսնելով սպանել է յիշեալ զինուորին և հինգ օսմանեան լիրա նւէր է ստացել:

Ռուսները տեսնելով որ մենք դանազան ուղղութեամբ ենք առաջանում, սրանից սարսափում են. անպայման նրանք կարծում են, թէ Գերմանիայից կամ Աւստրիայից մի զօրաբանակ է եկել. այդպէս էլ խօսել են արդէն:

Լուսաբացին շարժուում ենք Հանօ-Համօյի ուղղութեամբ և աջ թևից: Դէպի Արճէշ յառաջանում են հետևեալ ուժերը. Քեասիմ բէյի զիւրդիան՝ հինգ բատալիօններով, որոնց ձախ կողմից առաջանում են առաջին և հինգերրորդ շարժուն ուժերը, 17-րդ զիւրդիան և երկրորդ հեծեալ զիւրդիան: Իսկ Մուրադի միւս ափին կան 28-րդ զիւրդիան և Հաջի Համաի բէյի զիւրդիան՝ 8 բատալիօնով:

Բաւական յօգնելուց յետոյ, անցնում ենք մի պաշտպայրից, որի աջակողմեան բլուրների վրայ երևում է թշնամու հեծելազօրքը. մեր թնդանօթաձիգները նրանց վանում են այնտեղից, իսկ մենք շարունակուում ենք քալել: Մեր ձախ թևի վրայ սկսում է

սովալի կռիւ. մեր լեռնային թնդանօթները ոչ մի օգուտ չեն տալիս, իսկ թշնամին անվերջ կրակում է իւր բատարէաներից: Հակառակ թշնամու այս կրակին, մեր զինուորներ դարձեալ յառաջանում են: Այս բուպէիս ես մեն-մենակ եմ իմ գումարտակուումս. դրա համար չափազանց վախենում եմ պատասխանատուութիւնից: Այսօր 5-րդ շարժուն ուժը ծայրայեղ թուլութիւն ցոյց տւեց:

Երեկոն հանդարտ անցաւ. գիշերը կազդուրելուց յետոյ՝ լուսաբացից մինչև կէսօր զբաղւեցինք խրամներ փորելով: Մեր հիւսիսային արևմտեան կողմը տեսնում ենք, որ կարաքիլիսէից ահագին ծուխ է բարձրանում. հասկացուում է, որ թշնամին այրել է քաղաքը. միայն չի հասկացուում, թէ վառուղը քարերի՞, ուտելիքի՞, կամ ռազմամթերքի՞ պահեստներ են, թէ բուն քաղաքն է: Մեր հիւսիս-արևելքումն էլ մի թևթև ծուխ է բարձրանում. հաւանաբար դա էլ Դիազինն է:

Թշնամու երկու գունդ հեծելազօրքերը գնում են դէպի հիւսիս-արևելք՝ դէպի Բայազիտ. հաւանաբար թշնամին իր ուժերը քաշում է այդտեղ:

Մեր 5-րդ շարժուն ուժից 37-րդ գունդը, ինչպէս նաև մի հեծեալ գունդ եկան և մեր աջ կողքին տեղադրեցին:

Կէսօրին շարժուում ենք դէպի կարաքիլիսէ. մեր բոլոր ուժերը յառաջանում են այդ ուղղութեամբ: Յաջողութիւններ են, որ Ասուած տալիս է մեզ. կըլլջ-կէտիւկը մեր ձեռքումն է և պաշտպանուում է 37-րդ զնդի մէկ բատալիօնի և հեծելազօրքի մի զիւրդիայի կողմից: Թշնամին էլ թողել է Բայազիտ քաղաքու մըտադրութիւնը. նա նաճանջում է դէպի հիւսիս՝ դէպի

սահմանը՝ լեռնային գծաբանցիկ ճանապարհներով. Արշակերազ մտում է մեր ձախ կողմը, իսկ Բայազիտը աջ կողմը. թշնամին էլ պարտւած նահանջում է. նրանք ասում են եղեր, թէ մեր հրամանատարները զերմանացիներ են: Մենք էլ միշտ այնպիսի դիրքում ենք գտնուում, որ երբ թշնամին ուզում է հարւածել մեր միւս զորամասերին, մենք յանկարծ կողքից ըսկսում ենք հարւածել նրան: միշտ կողքից, միշտ կողքից, ահա այս բանը շփոթեցնում է նրան: Ասկից զատ՝ երբ մենք հովհարի պէս գանազան ուղղութիւններով յառաջանում ենք, նա բոլորովին մոլորւած է: Փառք քեզ Աստուած, հազար փառք քեզ: Մանազկերտի կռուումն էլ կողքից տւած մեր հարւածն էր, որ նրան փճացրեց: Կարաքիլիսէից դէպի աջակողմը տեղի ունեցող կռուումն էլ կողքից հասցրած հարւածն էր, որ նրան ջախջախեց: Ինչպիսի, էլ ոչ մի տեղ չի կարող նա կանգ առնել ու ամբանալ:

Տրւած հրամանի համաձայն, ամբողջ քանակով շարժեցինք դէպի Կարաքիլիսէ: Փառք Աստուծոյ, յաջողութեամբ գրաւեցինք Կարաքիլիսէն՝ բոցավառւած վիճակով, որովհետեւ թշնամին կրակ էր տւել քաղաքին՝ նահանջելուց առաջ: Հոգ չէ. մեզ այս երկրի հոգն է հարկաւոր, հողը թող մեզ մնայ, իսկ նրանից յետոյ ինչպիսի մենք մէկի տեղ երկուսը կը շինենք:

Չափազանց զեղեցիկ է Մուրադի հովիտը. Կարաքիլիսէն էլ այս հովտումն է գտնուում և ծառատաններով շրջապատւած շատ սիրուն մի տեղ է գրաւել:

Այսօր մեր աջ թևի ամբողջ ուժը անցաւ գետից. այստեղ գետը շատ մէծ չէ և ամեն տեղից հնարաւոր

է անցնել ուստի անմիջապէս սրունքնիս մերկացրինք ու անցանք: Երեկոյեան հանգստացանք Եճնալուքէյ անուն մի տեղ, որը գտնոււմ է Մուրադի հիւսիս-արևելեան կողմը: Փառք աստուծոյ, որ Մուրադին էլ հասանք, նրա ջրից էլ խմեցինք. արջը փախչում է դէպի հիւսիս:

Մեր երկրորդ բառալիօնի՝ թշնամու կողքից յառաջանալիս, թշնամին երկու բառարէայով կրակ է բացել մեր զինւորների վրայ, բայց ոչինչ չի կարողացել անել, որովհետև մեր որսորդական գծերը կառնոնաւոր են եղել. սնպիտանը թող մեզնից օրինակ վերցնէ: Հակառակ այդքան կրակ բաց անելուն, դարձեալ երկու ժամից աւելի չի կարողացել դիմանալ:

Ռուսները նահանջի մէջ կանոնաւորութիւն էլ չկայ. սպաները սրերի ուժով հաղիւ են կարողանում երկու տասնեակ քով-քովի բերել, բայց դարձեալ փախչում ու ցրւում են, իսկ ձիաւորները մէկ-մէկ փախչում են և ամեն մարդ միայն իր մասին է մըտածում:

Երէկ զիշերւայ մեր մնացած տեղը մի դաշտավայր էր, որ գտնուում է Մալանհուս գիւղի հիւսիսային արևելեան կողմը: Մուրադ գետի հարաւակողմը տարածուում է Ալադաղի լեռնաշղթան, որ անցնում է Մալանհուս գիւղի արևելեան հարաւային կողմից: Այդ լեռները ամբողջովին բնակւած են հայտաբանցի օւշի-րէթով: Այնպիսի սարահարթեր ունի, ուր երբէք ձիւն չի մնում. ուռաները այս սարահարթերը չեն կարողաչի մնում. ուռաները այս սարահարթերը չեն կարողացել գրաւել. յիսուն քրդեր երկու ուռուակառն բառացի գրաւել. յիսուն քրդեր երկու ուռուակառն բառալիոններ ետ են մղել ու ջախջախել: Ռուսները որոշել

են նախ գրաւել իրիժլիզը, իսկ այդ տեղերը թողել են երկրորդ գործադուծեան համար:

Մուրադ գետի հովտի պէս գեղեցիկ տեղ շատ հազւագիւտ է:

Թշնամին չորս ամիս էր, որ տեղաւորել էր Կարաբիլիսեում և պահեստներ էր շինել բանակի համար, այնպէս որ այնտեղ հաւաքել էր մեծ քանակութեամբ հաց, սապոն, իւղ, կոշիկ, գետնախինձոր, սուխարի և այլն: Կոխը մենք արինք, բայց 5-րդ շարժուն ուժը և 17-րդ դիւրգինն գրաւեցին այս մթերքները: Ամբողջ բանակը իր կեանքը պարտական է ստալին շարժուն ուժին: Կեցցէ՛ ստալին շարժուն ուժը և իր հրամանատարը:

Այսօր հանգստացանք. միւս վաշտի համար գինւորներ ուղեցին. քիչ էր մնացել, որ ամենէն պատուական զինւորներս տանէին. բարեբաղդարար հասան այն զինւորներս, որոնց որոշ պաշտօնով ուղարկել էի շրջակայքը. նրանց ուղարկեցի: Գումարտակս դասաւորեցի և տեսայ, որ բոլորն էլ ջոկած զինւորներս էին մնացել: Մեր վաշտին մի հատ ուստական հեռագրտակ տւին:

Երէկ մեր վաշտերից մէկը յատաճայել էր մինչև Սօղանլու գիւղը, բայց դարձեալ 5-րդ շարժուն ուժի երեսից ոչ մի գործ չէր կարողացել տեսնել. թշնամին յաջողել է մեծ քանակութեամբ ոչխարներ փախցնել:

Վատ լուր.—Մեր Սաադէդտին Էֆէնդին պիտի փոխադրուի 5-րդ շարժուն ուժի մէջ, իսկ նրա տեղ մի սպայ պիտի գայ, որ մեր հազարապետի ծանօթն է և որին հազարապետը ուզում է ուղարկել մեր գումարտակը: Ինչ ուզում է լինի. հազարապետի գիտնալիք

գործն է: Ծամենայն դէպս ես ազատոււմ եմ պատանխանաւութիւնից:

Այս իրիկուն չափազանց համեղ մի գառի խորոված կերանք. ճիշտ նման էր Սուլթանի համար պատրաստած խորովածին և դեռ նրանից էլ լաւ էր: Հապա թարմ մածուններ, կարկանդակներ... Մուրադի հովտի խնջոյքն էր...

Կէս գիշերին հրաման տրեց պատրաստելու, որովհետև թշնամու եօթն բատալիօնի չափ ենթազրուոյ ուժը եկել և Ալաշկերտի հարաւարևմտեան բլուրները գրաւել է. ամեն ոք պէտք է կէս ժամայ ընթացքում պատրաստ լինի շարժելու: Բայց հակառակ տրւած հրամանին՝ մինչև լոյս չշարժեցինք:

Այսօր Ալաշկերտի ուղղութեամբ, այսինքն մեր ձախակողմից, թնդանօթի ձայներ են լուում: Հրաման է տրւում շարժելու. դէպի ետ երթալով դարձեալ պիտի անցնենք Մուրադի միւս ափը, որովհետև Ծօն-Չալուի բլուրները ձեռնառու չեն պաշտպանելու համար: Բանակատեղ ենք ընտրում Կէօրկէօրիկ գիւղի հիւսիսային արևելեան կողմը, որ մէկ ժամով դէպի հարաւ է գտնւում մեզնից. մենք դարձեալ պահեստիների շարքումն ենք գտնւում:

Ուրախալի լուր.—Դարձեալ հաշտութեան լուրեր, որոնք դիւրիդայի կենտրոնից են տարածել. ասում են, որ այս մասին պաշտօնական հեռագիրներ էլ կան: Որպէս թէ Ռուսիան իր զինւորները ետ պիտի քաշէ թիւրքական հողերից, կովկասին ինքնավարութիւն պիտի տայ, Ատրպատականը պիտի պարպէ. սրանց փոխարէն պայման է դնում, որ մենք էլ հայերին ընդունենք: (Սրդէն վաճում 3 ու կէս հայեր են մնացել)

Քող գան նրանց էլ կոտորենք): Գերմանիան պիտի
 զերազարձնէ Բելգիան և Ֆրանսայից գրաւած հողերը:
 (Աստուած իմ, եթէ այս լուրերը բոլորովին սուտ էլ
 են, դու ուղիղ դարձրու նրանց): Մուշի մէջ հայերը
 յարձակել են հրեանդանոցի վրայ, բայց մի բառա-
 լիօն զինուորներ չըջապատել են նրանց և բոլորին էլ
 կոտորել: Ս. Կարապետի շրջանում 10,000-ի շափ
 հայեր կան եղեր. մի բառալիօն մի թնգանօթով նը-
 բանց էլ է մաքրել: Վարչաւայի անկումը Մուշում
 պաշտօնապէս յայտարարել է: Գնդացիբային վաշտի
 սպայ Նէշէթը ասում է, որ 10 օր առաջ գիւղիցիայի
 պատերազմական խորհում լսել է, թէ՛ «խաղաղութեան
 դեպքանախորհուրդը պիտի գումարի Գերմանիայում,
 թէ՛ զինադադար չպիտի լինի, թէ՛ թշնամիներ ճախ
 չեն ուզեցել մեր ներկայացուցիչներին ընդունել մեզ
 պարտւած համարելով, բայց Գերմանիան ասել է, թէ
 Քիւրքիան իմ դաշնակիցս է և յաջողել է ընդունել
 տալ և այլն և այլն»: Ա. իս, մինչդեռ մենք այսպէս
 խաղաղութեան մասին ենք գտաւնցում, անա կռիւր
 նորից սկսում է: Երէկ թշնամու երեք հետեակ գնդե-
 րը յառաջած լինելով մինչև Գարիայի Ուլա և Գարիա-
 յի Սուֆլա բլուրները, այսօր յարձակողականի են
 անցնում: Այդ ուժը յուլիսի 25-ից առաջ չի կարող
 կռիւ ընթացքին ազդել: Աստուած իմ, դու մեզ օգնիր
 մինչև վաղը, գուցէ վաղը նոր ուժեր ստանանք և այս
 ծանր կացութիւնից ազատենք քո շնորհով:

Ան գուժ է հասնում լուսաբացին. — Եթեբրորդ
 գնդի երկրորդ բառալիօնը ջարդ ու փշուր եղած նա-
 հանջել է, որովհետեւ պարտուելուց յետոյ օրը ցերեկով
 չէր կարողօնում նահանջել, մանաւանդ որ լաց դաշ-

տից և յետոյ ջրից անցնելու պարտուուրւած էր. այդ
 պատճառով բազմաթիւ մտերի է բաժնւել. կռիւր
 սկսել է լայն ճակատով. թշնամու մի հետեակ և երկու
 հեծեալ գնդերը՝ տեսնելով մեր ուժի սակաւութիւնը՝
 սաստիկ կերպով ճնշել են մեզ: Այժմ բոլոր սպաները
 գանգատուում են Հաջի Ֆէհրադից, ասելով թէ նա
 վարչական ընդունակութիւն չունի: Ես կարծում եմ,
 որ սրանից աւելի մեծ սխալը այն է եղել, որ դիւ-
 զիայի հրամանատարը հրամայել էր, թէ «մինչև որ ես
 չհրամայեմ, ետ չպիտի քաշուիք»: Գերակշռող ուժի
 հանդէպ ինչ անէին խեղճերը: Բանը բանից անցնե-
 լուց յրտոյ միայն հասել է ետ քաշելու հրամանը.
 Իսկ մինչ այդ՝ նահատակել են Հաջի Ֆէհրադ էֆէն-
 դին, թնգանօթաձիգների սպայ Ջէվտէթը և մեր ու-
 թեբրորդ գումարտակի սպայութեան թեկնածուն՝ Վաս-
 Փին: Բացի այս՝ լեռնային թնգանօթի յենարանը
 միայն ֆրացել է, իսկ զինուորները ցան ու ցրիւ եղած
 նահանջել են անագին կորուստի ենթարկւելով: Իսկ
 իմ Ռէֆէթիս բաղդից նրա դիւբերը յարմար են եղել.
 նա բռնել է Եօնջալուից հարաւ տարածւող Մուրադի
 ափի բարձունքները. թշնամին ուժեր ստանալով ան-
 ցել է յարձակողականի. մինչև երեկոյ տեղի է ունե-
 ցել հետեակագործի և հրետանու կռիւ, բայց երե-
 կոյեան կողմը կռիւր դադարել է:

Մինչդեռ մենք յոյս ենք տածում հաշտութեան
 մասին, անա այս անաստւած անկրօնը աւելի և աւելի
 ճնշում է մեզ: Աման Աստուած, դու ես իմանում. դու՞
 յաջողութիւն մի տար այս կրօնի թշնամուն:

Ասում են, որ թշնամու երկու հեծեալ գնդերը
 մտել են մեր 17-րդ և 28-րդ գիւղիականների մէջտեղը

և վառել են կենսամթերքի պահեստները: Մի գունդ հետեակ զինւորներ ուղարկել են թշնամին հեռացնելու համար, բայց զրուծիւնը շատ կասկածելի է: Տեսնենք մինչև վաղը ի՞նչ է լինելու: Աստուած իմ, դու յաջողութիւն տուր 29-րդ դիւրիւրային, որպէս զի մի անգամ թշնամուն քշենք մինչև սահմանը:

Երեկոյեան հասնում է սե գուժ.—Հրամայում է նահանջել, որովհետեւ թշնամու անյայտ ուժերից երկու հետեակ բատալիօններ գրաւելով Դուժագն ու կուժը անցել են թիկունքը. սրանով մեզի բաժնում են երկու մասի: Այլ թեի վրայ, այսինքն Դիադինի ուղղութեամբ, տեսնել են հինգ հետեակ բատալիօններ և երեք հեծեալ գնդեր. իսկ մեր աջ թեւը բաց է և վտանգը հաւանական:

Երեկոյեան աղօթքի պահին մեկնում ենք, թէև ես աւելի ուրախ կը լինէի, եթէ տեղն ու տեղ մեռնէի, քան թէ ետ երթայի: Երկու երեք ժամ քալելուց յետոյ անցնում ենք Մէլէնհասի հարաւակողմը գտնուող ջրից. անքնութիւնից համարեա ընկնում, ուշաթափւում եմ: Այդ բոպէին յիշում եմ այն օրը, երբ Ակրարում հիւր եղայ մօրս մօտ, որ այնքան խնամքով ծածկեց ու փաթաթեց ինձ:

Իիշերը մինչև լոյս քաշում ենք և լուսաբացին անցնում ենք մի գիւղից, ուր տեսնում ենք, թէ ինչպէս բոլոր արմտիքները թափւել են գետնի վրայ. անցնում ենք մի ջրից՝ Իսա գիւղը գնալու համար:

Հանդատանում երբ մի փոքր, և ահա գրուծիւնը փոխւում է, որովհետեւ հասկացւում է, որ Դուժագ մտնողները միայն մի քանի չէթաներ (հրոսախմբեր) են եղել: Մեր հիմակայ կացութիւնը շատ լաւ է. ին-

շալլան այս նահանջը չի ազդել ձախ թեի վրայ: Մի երեկոյ առաջաւոր դիրքերում պահնորդութիւն ենք անում: Այն ձիււտը գունդը, որ պէտք է պահէր մեր աջ թեւը, դեռ չի եկել, իսկ թշնամու հետախուզող խմբերը գերի են վերցրել մեր զինւորներին, որոնք գնացել էին ջուր բերելու:

Առաւօտեան շարժւում ենք դէպի առաջաւոր դիրքերը. ես մի խումբ զինւորներով գրաւում եմ 4000 մէթր տարածութիւն ունեցող ձակատը և յանձնելով երկրորդ բատալիօնին՝ վերադառնում եմ ետ իբրև պահեստի ուժ: Այդ կուում իմ տասնեակներից մէկի՝ կողքից բացած կրակը մեծ դործ կատարեց. այդ կերպով նա հեշտացուց յառաջխաղացումը այն գիւրիւրայի, որ պէտք էր առաջ անցնէր մեր աջ կողքից:

Հասիւ այս կտիւր վերջացրել եմ, ահա ինձ տալիս են աւելի ծանր ու պատասխանատու մի պարտականութիւն.—Երկու խումբ զինւորներով գրաւել այն առանձին բլուրը, որ ամենաշատ հեռաւորութեան վրայ է գտնւում մեր դիրքերից: Թշնամին սկսել էր յառաջանալ և մտել էր մեր դիրքերի առջև գտնուած ձորը, բայց մերոնք չէին նկատել ու ինձ գրում էին, թէ աջ կողմը ազատ է. ես էլ մի խումբ ուղարկեցի աջ կողմը. մինչդեռ պէտք էր, որ ես երթայի այն կողմը, ուր գտնւում էր իր ամենամեծ ուժը, բայց գնդի հրամանատարը ինձ ուղարկեց իմ երկու տասնեակիս մօտ: Մարդը չի իմանում, թէ որտեղ է գումարտակո և որտեղ է տասնեակս. ես էլ չեմ կարողանում հակառակել հրամանին: Արդիւնքը եղաւ այն՝ որ վաշտս երկու երեք անգամ աղէտի ենթարկեց և հետեանքը անզրադարձու նաև ինձ վրայ: (Ա՛խ թող ես գումար-

ասակիս գլուխը գտնուէի, թող բոլորս միասին կոտոր-
 ւէինք): Թշնամին յանկարծ ձորից դուրս գալով մեծ
 մասին գերի է վերցրել. այդ բռնակին փոխ-յիսնա-
 պետս (չաւուշը) ինձ է փնտոել, մինչդեռ ես այդ բո-
 պէին երկու տասնեակի մօտ սաստիկ կուր մէջ էի.
 մինչև որ վերադարձայ, արդէն գումարտակս ջարդ ու
 փշուր էր եղել: Հազար դժւարութեամբ մի քիչ կարգի
 գցեցի և դարձեալ գերքեր գրաւեցինք: Թշնամին
 դում-դում գնդակներ էր արձակում. ես մինչև երեկոյ
 անընդհատ կրակ քաց արի, իսկ երեկոյեան էլի կուե-
 լով ես քաշեցիք: Դարձեալ նահանջ. կոխը դադրեց-
 նելով մի գիշեր քալեցինք. մի ջրից անցանք և առա-
 ւօտեան հասանք Բաղթաքեաւէ գիւղը: Տեսայ բառա-
 լիօսի հրամանատարին. «Ի՞նչ էիր անում դու այն-
 տեղ—ասաց նա,—ինչու քո գումարտակի զլխին չէիր
 կանգնել»: Ի՞նչ անեմ, ասի ես, պարտականութիւն
 ստանձնելով գնացի»:

Հրամանատարը և իր ընկերը կարեորութիւն
 շուէին իմ բացատրութեան և յայտնեցին, որ ես ամ-
 բաստանած եմ: Հրամանատարը հրամայեց իրանց հետ
 դիւանատուն գնալ քննելու համար: Դիւանատան մօ-
 տենալիս, ես դարձեալ ասի հրամանատարին, թէ գու-
 մարտակս խանդարել էր, ես զբաւել էի նրանց կար-
 գի բերելով: Այս խօսքս էլ արդիւնք չուեց և նա կրտ-
 բուկ կերպով ասաց ինձ. «Դու նրանցից շատ առաջ
 էիր, հետևաբար պատասխանատու ես»:

Անմիջապէս որոշումս կայացրի. «Արդտէստ
 (լաւացել) անելու համար ձորը իջնեմ ու դառնամ»
 ասելով ուղղեցի դէպի ձոր:

Մի ծանր մտածմունք ճնշեց սիրտս և ինքս ինձ

ասում էի. «Այսքան պատուաւոր կոիւնք մզելուց յե-
 տոյ մի՞թէ այսպիսի անպատիւ վախճան պիտի ու-
 նենայի»:

Բայց երկար չմտածեցի. անմիջապէս մտայ մի
 ժայռի պատուաւոր մէջ ու պահւելուցի. նախապատ-
 մական դարերի մարդոց պէս մի գիշեր ապրեցի այդ
 ժայռի ձերպում. մեր ուժերը բոլորովին քաշեցին ու
 ես մենակ մնացի:

Թշնամին չէր երևում, բայց քանի որ որոշումս
 կայացրել էի, սկսեցի յառաջանալ դէպի թշնամու կող-
 մը: Ծանապարհին 5—6 զինւորների հանդիպեցի և ան-
 միջապէս ձեռներս վեր բարձրացրի, կարծելով թէ
 թշնամու պահակներն են, բայց մեր զինւորներն էին,
 որոնք բաժնւած էին իրանց զօրամասից: «Ի՞նչ էք
 փնտրում այս տեղերը,—ասի նրանց,—հեռացէք, թէ չէ
 կարող է պատահել, որ գերի տարւէք»: Այս խօսքերով
 նրանց հեռացրի, իսկ ես կամաց-կամաց իջայ մինչև
 ջրի ափը: Այդտեղ հանդիպեցի 5—6 կողակների, բայց
 վախեցայ յանձնուելու:

Երեկոյեան, դէմ մտայ մի գիւղ՝ մի քիչ ցորեն
 գտնելու և ուտելու յոյսով, բայց յանկարծ կողակները
 եկան և սկսեցին կողոպտել գիւղը: Ինձ էլ բռնեցին և
 ամեն ինչս կողոպտեցին. շատ անզգամ մարդիկ են
 այս կողակները, ջրամանիս անզգամ աչք տնկեցին.
 անպաւեցեցին իմ զինւորական զոյքերս: Ի՞նչ արած.
 պարտաւոր էի տանել, որովհետև այլևս գերի էի:

Ինձ տարան իրանց հեծեալ դիւբգիայի մէջ, որ
 պէտք էր յառաջ շարժւէր. զինւորները չափազանց հե-
 տաքըրութեամբ նայում էին ինձ: Տեսնեցի նրանց
 սպաների հետ, որոնք շարունակ ծիծաղում էին:

Ռուսիան մեծ պետութիւն է և սարսափելի ձիւ-
տորներ ունի. միթէ մենք սրանց հետ պիտի կարողա-
նանք կուել. միթէ այսքան էլ ձիւտոր զօրք կարող է
լինել. ուղղակի սարսափելի է: Սրանց կողակների
գնդերը առանձին են, դրագունները առանձին: Կեց-
ցենք մենք, որ մի բուռը զինւորներով և անվերջ զբը-
կանքներով կուելով դարձեալ յաղթում էլ ենք: Մենք
շատ պէտք է աշխատենք, որպէսզի կարողանանք սը-
բանց դէմ կուել: Հեծելազօրքի կազմակերպութիւնները
չափազանց մեծ ու կանոնաւոր են, իսկ կողակները
արդէն յատկապէս պատրաստուած են հեծեալ զինւո-
րութեան համար: Ռուսիան չէրքէզներին չի ուղարկել
այս Փրոնտը. նրանց փոխարէն բերել է Կուբանի, Ու-
րալի, Վոլգայի և Սիբիրիայի կողակներին:

Գիշերով գնացինք նրանց հրամանատարի մօտ:
Մեզ հարցաքննեցին, բայց ի հարկէ չկարողացան այն-
պիսի յայտնութիւններ լսել, որոնք պէտք գային ի-
բանց գործին: Թէյ տւին ինձ. բոլոր զինւորներն էլ
իրանց առանձին-առանձին բաժակներով թէյ խմեցին:
Մի քիչ էլ պահած միս տւին ինձ: Պատերազմը սկսե-
լուց ի վեր ես այդպիսի միս չէի կերել: Գիշերն էլ մի
զինւորական վերարկու տւին ինձ և մինչև առաւօտ
բացօդեայ քնեցի. գիշերը մի քիչ էլ անձրև տեղաց,
բայց ինչ կարող էի տնել, պէտք էր որ տակայի:

Այս առաւօտ հեծելազօրքի բանակատեղիից ճամ-
բայ ընկանք և ամբողջ օրը քալեցինք. կէսօրեայ մօտ
ինձ կանչեցին բանակատեղի կենտրոնը. ամենքը նա-
յում էին դէմքիս. «աշխարհի առջև խայտառակեցինք».
— ասում եմ ինքս ինձ:

Երեկոյեան հասանք Համօ, և Մուրադի միւս ա-

փը պիտի անցնէինք: Ասուած իմ, ինչ զեզեցիկ մի
կամուրջ են շինել ուռաները: Հազիւ երեք օր է ինչ
մենք թողել ենք այդ տեղը և անա նա կամուրջը
կանգնեցրել է. մինչդեռ մենք հարիւրաւոր տարիներ
տիրել ենք այս տեղին, բայց երբէք մեր մաքից չի
անցել այնտեղ կամուրջ շինել:

Գիշերը մերկ ու սոված վիճակով պառկեցի մի
բաց տեղ, որ ծածկուած էր անասունների աղբերով.
տակա թաց, իսկ վրաս խոնաւ լինելու պատճառով
մինչև լոյս չկարողացայ քնանալ: Ինձ հետ կան նաև
մեր զինւորներից, որոնք իրանց յօժար կամքով գերի
են ընկել և շատ ուրախ են. թիւ և հաշիւ չկայ այն
գերիներին, որոնք փառք են տալիս իրանց ներկայ
վիճակին և ազդադակում են «կեցցէ Ռուսաստան»:

Մենք խայտառակեցինք. թում է, թէ այս
մարդկանց մօտ արժանապատուութիւն ասած բանը
չկայ: Պատուաւոր մարդը, թէկուզ անօթութիւնից մեռ-
նի էլ, մուրացկանութիւն չի անում: Սրանք խայտա-
ռակեցին մեր կառավարութեան պատիւը:

Կողակների մտրակների հարւածները ուտելով,
խայտառակ վիճակով քալում ենք. անցնում ենք մի
երկրորդ կամըլից. այնքան հոյակապ է այս կամուր-
ջը, որ անկարելի է չհիանալ: Նա որոշել է մեր հոգե-
րի կցումը, իսկ դու թիւրք, քնիր գեռ, քնիր:

Վերջապէս անցնում ենք Մուրադի կամըլիցն էլ
և գալիս ենք Կարաքիլիսէ: Տեսնում ենք, որ մի ա-
տոմբքի կանգնած է հրամանատարի դաան առջև.
սպաները դուրս են գալիս. մեզ տանողները յայտնում
են իմ սպայ լինելու: Նրանց զլխաւորն ինձ բարևում և
յետոյ մի առանձին սենեակ է յատկացնում ինձ:

Այդ բուպէին տեսնում եմ կազանցի երկու ման-
մեղական գինեորների հետ, որոնցից մէկի անունը
Մէհէմէտ էմին է, իսկ միւսինը՝ Մէհէմէտ Ալի:
Սրանք ուսական պիտակներ են դրել և գինեորական
կասկէտ. էհ, ինչ աննու Ռուսիան բոլոր մանմեղա-
կաններին ուղարկել է Վարչաւայի կողմերը...

(Այստեղ վերջանում է յուշատետրը):



6288

0001979

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0001979

